

**Հայը պատմական հայրենիքը գերադասում է իրական հայրենիքից: Գերադասում է, քանզի պատմական հայրենիքը խնամք չի պահանջում: Այդ հայրենիքը տուրք չի պահանջում, քրտինք չի պահանջում, պաշտպանության կարիք չունի: Եվ այդ հայրենիքի հմայքն այն է, որ այնտեղ ապրելը պարտադիր չէ: Եվ հարյուրամյակներ շարունակ մենք մեր հայրենիքը մաս-մաս դարձնում ենք պատմական հայրենիք ու կապվում ենք հավաքական, չպարտավորեցնող, սրտագին սիրով:**

**Հայը հավաքական գոյությունից վեր է դասում հավաքական սերը առ ոչինչ:**

**Հարյուրամյակներ շարունակ մաս-մաս մեր հայրենիքը դարձնելով պատմական՝ մաս-մաս ուժեղացնում ենք մեր հարևաններին, ուժեղացնելով՝ հռչակում ենք թշնամի, նեղվում ենք թշնամու հարևանությունից, անիծում ենք մեր իրական հայրենիքի փոքրությունը և երազում մի հզոր, մի խաչակրաց բանակ, որ դարձյալ կգա ու կանցնի մեր հայրենիքի, մեր պատմական հայրենիքի, մեր հարևանների վրայով ու այս անգամ, գուցե, հավերժորեն մնա...**

Վանո Սիրադեղյան

Երեքշաբթի  
19 հոկտեմբերի 2021թ.  
№ 20 (562)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՏՐ» ՍԱՀՄԱՆԱԾԱԿ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:  
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:  
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47  
syuniacyerkir@mail.ru



# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



## Իրանը չի հարցնի Հայաստանի կարծիքը, և ինքը զորք կմտցնի Հայաստան, որպեսզի թույլ չտա թուրքերին ու ադրբեջանցիներին՝ կտրել Հայաստանն Իրանից

Իրանի բանակի ցամաքային զորքերի իրամանատար Քյումարս Հեյդարին ասել է՝ «Իրանի համար աշխարհաքաղաքական մեծ պարտություն կլինի, եթե թուրքերն ու

ադրբեջանցիները, դաշնակցելով բրիտանացիների և հրեաների հետ, կտրեն Իրանի և Հայաստանի միջև սահմանը: Եվ ամենայն հավանականությամբ, նման սցենարի դեպքում Իրանը չի հարցնի Հայաստանի կարծիքը և

ինքը զորք կմտցնի Հայաստան, որպեսզի թույլ չտա թուրքերին և ադրբեջանցիներին՝ կտրել Հայաստանն Իրանից: Ըստ երևույթին, այդ նպատակով այնտեղ անցկացվում են զորա-

Շարունակությունը՝ էջ 5

30.09.2021

## Չանգեզուրի պղնձամոլիբդենայինում նոր ժամանակներ են սկսում

Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի (ՉՊՄԿ) 60 տոկոսի սեփականատեր է դարձել ռուս միլիարդատեր Ռոման Տրոնցենկոն, որի «Գեոպրոմայնիզ գոլդ» ընկերությանը պատկանում են նաև Սոթքի ոսկու հանքավայրն ու Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը: 60 տոկոս բաժնետոմսերի 25 տոկոսը նա կվիրաբերել է ՀՀ կառավարությանը, իսկ կոմբինատում բաժնետոմսերը ձեռք է բերել Մոսկվայում գրանցված «Արդյունաբերական ընկերություն» բաժնետիրական ընկերության միջոցով:

ՉՊՄԿ-ում Տրոնցենկոյի բաժնետոմսերի առկայության մասին հաղորդեց ՀՀ կառավարությունը: Պղնձամոլիբդենայինում 60 տոկոսի հասնող բաժնետոմսերի առթուվածառքը, ըստ կառավարության, կայացել է սեպտեմբերի 30-ին, իսկ կառավարությանը կվիրաձեռված բաժնետոմսերը կազմում են ամբողջ կոմբինատի բաժնետիրա-

կան կապիտալի 15 տոկոսը: Մինչև 2020-ը կոմբինատի մեծամասնական բաժնետերը գերմանական «Քրոնիմետ» ընկերությունների խումբն էր, որից ՉՊՄԿ-ն բաժնետոմսերի հետգնում էր իրականացրել: Այդ բաժնետոմսերը տեղաբաշխվել են՝ անցնելով ռուսական ընկերությանը: Ըստ կառավարության հաղորդագրության՝ Տրոնցենկոն ուրախությամբ է տեղեկացրել, որ իրենց գնած բաժնետոմսերի մի մասը փոխանցել են կառավարությանը:

«Մենք մտադիր ենք ընդլայնել համագործակցությունը ՀՀ կառավարության հետ, և սա ավելի լայն ներդրումային տեսլականի առաջին քայլն է: Այս ամենից կշահի Հայաստանի Հանրապետությունը, ժողովուրդն ու մեր բաժնետերերը, իսկ Հայաստանի տնտեսության համար կբացվեն նոր հնարավորություններ: Նպատակ ունենք առաջիկա տարիներին Հայաստանում սկսել նոր պղնձածուլարանի կառուցումը»:

Փոխվարչապետ Սուրեն Պապիկյանն իր հերթին հայտնել է, որ տարածված պրակտի-



կա է խոշոր հանքարդյունաբերական ընկերությունում պետական բաժնեմաս ունենալը: Ռոման Տրոնցենկոն միլիարդատեր է, որն է պատկանում Aeon Corporation-ը, նրան իր մեջ ներառում է 14 օդանավակայան, նավա-

Շարունակությունը՝ էջ 5

## Ու եղավ ստի հրավառություն, Ու խաբեության հարսանիք եղավ...

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Հունվարի 1-ից ընտանիքում 3-րդ եւ ամեն հաջորդ նոր ծնվող երեխան մինչև 6 տարեկան դառնալը կստանա ամսական 50 000 դրամ

«Ուզում եմ կարելորել ընտանիքում երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ նոր ծնվող երեխայի համար դրամական աջակցություն նշանակելու ծրագիրը, որը պետք է մեկնարկի 2022-ի հունվարի 1-ից: Այսինքն՝ հունվարի 1-ին ընտանիքում երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ նոր ծնվող երեխան մինչև 6 տարեկանը կստանա ամսական 50 հազար դրամի չափով աջակցություն», – սեպտեմբերի 30-ին, հայտարարեց ՀՀ վարչապետը:

Նա 2022-ի բյուջեի ծրագրերում կարելորել մանկապարտեզների եւ դպրոցների հիմնադրույթում, շինարարությունը, նաեւ «Հյուսիս-Հարավ» ճանապարհի Սիսիան-Ագարակ հատվածի շինարարության մեկնարկը, որի աշխատանքները կսկսեն 2022-ի վերջին: «Ձրամբարների կառուցման առումով ես բավական բարձր նշանոց ենք դրել եւ դրանք հաղթահարելու համար մեզ անհրաժեշտ է արդյունավետ եւ ակտիվ աշխատել», – ասաց նա:

ՀՀ կառավարությունը Սյունիքի մարզին կտրամադրի շուրջ 1 միլիարդ դրամ

Գումարը կուղղվի Սյունիքի համայնքների կենսականությունը վերականգնելու և առկա խնդիրները լուծելուն: Ըստ Սուրեն Պապիկյանի՝ «Նախարարական կոմիտեում քննարկել ենք նպատակահարմարությունը՝ ամեն անգամ տրամադրել 200 մլն դրամ: Այս նախագծով հաստատում ենք 200 մլն դրամի փոխանցումը Սյունիքի զարգացման հիմնադրամին՝ հաշվետվությունից հետո պատրաստակա մուլթիլից հայտնելով տրամադրել նաեւ 800 մլն դրամը»:

30.09.2021

## Արցախից տեղահանված 4 ընտանիք ապահովվել է կացարանով

Կապանի համայնքապետարանի նախաձեռնությամբ և «Չարատ Կապան» ՓԲ ընկերության ֆինանսական օժանդակությամբ իրականացվող ծրագրով՝ Արցախից տեղահանված և Կապան համայնքում մշտական բնակություն հաստատած 4 բազմազավակ ընտանիք արդեն իսկ ապահովվել է կացարանով: Ընտանիքներին տրվել է նաև գյուղատնտեսությամբ զբաղվելու հնարավորություն և միջոցներ՝ ըստ նրանց նախապատվության: Սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման նպատակով ընտանիքներին աջակցություն է ցուցաբերել «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն՝ տրամադրելով խոշոր եղջերավոր կենդանիներ:

Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը հյուրընկալվել է Դավիթ Բեկ գյուղում բնակություն հաստատած Հովհաննիսյանների, Այվազյանների և Կարապետյանների ընտանիքներում, ծանոթացել նրանց կենսապահովման պայմաններին և կարիքներին:

10.10.2021



### Գնել Սանոսյանն այցելել է Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարը ծանոթացել է ներդրումային ծրագրի իրականացման աշխատանքներին, ընկերության ղեկավարության հետ քննարկել կոմբինատի նոր կառուցվածքը, կոմբինատի աշխատանքի արտադրության նոր ծավալները:



«Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն ավարտել է ձեռնարկության տեխնոլոգիական վերազինմանն ուղղված ներդրումային ծրագրի իրականացումը: Արդիականացման համապարփակ ծրագիրն ուղղված էր արտադրության կապիտալ նորացմանը՝ հանքի վերասարքավորմանը և գործարանի տեխնիկական վերազինմանը: Ծրագրի նպատակն էր օպտիմալացնել արտադրությունը, բարձրացնել արտադրողականությունը և նվազեցնել արտադրանքի ընդհանուր արժեքը:

Ծրագիրն իրականացվել է համակարգված մոտեցման հիման վրա, որը ենթադրում էր ոչ միայն արտադրության արդիականացում, այլև գործարանի աշխատակիցների միջին օղակի որակավորման բարձրացում և կազմակերպական կառուցվածքի կատարելագործում:

Ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել են բաց հանքի, հիմնական հանքարդյունաբերական և տրանսպորտային սարքավորումների տեխնիկական վերազինման աշխատանքներ:

2020 թվականին մշակվեց նաև ձեռնարկության արտադրողականությունը տարեկան 3.5 միլիոն տոնայից մինչև 4.5 միլիոն տոնա հանքաքարի հասցնելու նախագիծ: Դրա շրջանակներում արդիականացվել է կոմբինատի հարստացման ֆաբրիկան:

Պոչամբարի հզորությունը մեծացել է նաև Իրան-Հայաստան գազամուղի հատվածի տեղափոխման, մայրուղային խողովակաշարերի վերակառուցման և 2-րդ ու 3-րդ բարձունքների պոմպակայանների վերակառուցման շնորհիվ: Իրականացվել է 3-րդ բարձունքի նոր պոմպակայանի կառուցումը:

Տեխնիկական նախագծի շրջանակներում շահագործման է հանձնվել հետադարձ ջրամատակարարման համակարգը, ինչը գալիորեն նվազագույնի է հասցնում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը: Նոր համակարգը նաև նվազեցրել է ջրի օգտագործումը 30%-ով:

«Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ արդիականացման համապարփակ ծրագրի ներդրումների ծավալը կազմել է ավելի քան 30 մլն ԱՄՆ դոլար:

13.10.2021

## Գորիսում, Մեղրիում, Տաթևում և Տեղում ավագանու ընտրություններ էին

2021 թ. հոկտեմբերի 17-ին Գորիս, Մեղրի, Տաթև և Տեղ խոշորացված համայնքներում տեղի են ունեցել ավագանու ընտրություններ:

Համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքում Մեղրի համայնքում 8595 ընտրողից բաղկացած քվեարկությանը մասնակցել է 5098-ը (անվավեր քվեաթղթիկների թիվը՝ 124): Կուսակցությունների օգտին տրված ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝ «Ազատական» կուսակցությանը՝ 716, «Ապրելու երկիր» կուսակցությանը՝ 487, «Հանրապետություն» կուսակցությանը՝ 2133, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը՝ 1637:

Գորիս համայնքում 20696 ընտրողից քվեարկությանը մասնակցել է 10399-ը (անվավեր քվեաթղթիկների թիվը՝ 282): Ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝ «Ա. Առուշանյան» դաշինք՝ 6269, «Հայ Ազգային Կուսակցություն» կուսակցությանը՝ 282, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը՝ 3568:

Տեղ համայնքում 3901 ընտրողից քվեարկությանը մասնակցել է 2359-ը: «Ապրելու երկիր» կուսակցության օգտին քվեարկել է 806 ընտրող, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին՝ 1501-ը:

Տաթև համայնքում 4197 ընտրողից քվեարկությանը մասնակցել է 2615-ը (անվավեր քվեաթղթիկների թիվը՝ 49): «Ապրելու երկիր» կուսակցության օգտին քվեարկել է 337 ընտրող, «Հանրապետություն» կուսակցության օգտին՝ 949-ը, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին՝ 1280-ը:

Տաթև համայնքում հոկտեմբերի 19-ին տեղի է ունեցել քվեաթղթիկների վերահաշվարկ: Մեղրի համայնքում 3901 ընտրողից քվեարկությանը մասնակցել է 2615-ը (անվավեր քվեաթղթիկների թիվը՝ 49): «Ապրելու երկիր» կուսակցության օգտին քվեարկել է 337 ընտրող, «Հանրապետություն» կուսակցության օգտին՝ 949-ը, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին՝ 1280-ը:

Տաթև համայնքում հոկտեմբերի 19-ին տեղի է ունեցել քվեաթղթիկների վերահաշվարկ: Մեղրի համայնքում 3901 ընտրողից քվեարկությանը մասնակցել է 2615-ը (անվավեր քվեաթղթիկների թիվը՝ 49): «Ապրելու երկիր» կուսակցության օգտին քվեարկել է 337 ընտրող, «Հանրապետություն» կուսակցության օգտին՝ 949-ը, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին՝ 1280-ը:

## Հայաստանի երիտասարդական մայրաքաղաք Կապանն ընդունել է ԱՊՀ երկրների պատվիրակներին

Հոկտեմբերի 11-ին Հայաստանի երիտասարդական մայրաքաղաք Կապանն ընդունել է ԱՊՀ երկրների երիտասարդության հարցերով խորհրդի անդամներին՝ Հայաստանից, Բելառուսից, Ռուսաստանի Դաշնությունից, Ղրղզստանից, Ուզբեկստանից և Տաջիկստանից՝ վեց երկրի մոտ 50 պատվիրակ: Այունիքի մարզկենտրոնում պետք է կայանար ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերով խորհրդի նիստը և «100 գաղափար ԱՊՀ համար» միջազգային երիտասարդական մրցույթի եզրափակիչ փուլը: Ընդհանուր առմամբ՝ իրենց երկրներում հաղթող ճանաչված գաղափարների հեղինակները Հայաստանում անցկացվող միջպետական փուլում ներկայացրել էին նոր գաղափարներ ավելի քան 10 անվանակարգով:



Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում տեղի ունեցած ԱՊՀ-ի երիտասարդության խորհուրդի նիստին ներկաներին ողջունել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը՝ նշելով, որ ավանդաբար ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերով խորհուրդն ամփոփում է նախորդ նիստում ընդունված որոշումների իրականացումը և բոլոր երկրների համար ուղեցույց հաղորդ ժամանակահատվածի անելիքները: Նախարարի տեղակալն անդամներին խնդրեց պարզապես երիտասարդության հարցերին միտված պետական քաղաքականության հիմնական ուղղություններին՝ փաստելով, որ ՀՀ կառավարության առաջին հիմնական ծրագրում ամրագրված է ընդունել երկու հիմնական փաստաթուղթ՝ երիտասարդության զարգացման ռազմավարություն և օրենք երիտասարդության համար:



Կապանի մշակույթի կենտրոնի նախարարի տեղակալից ավելի քան 100 գաղափար ԱՊՀ-ի համար» տաղավարային ցուցադրություն, որի բացումը տեղի ունեցավ օրվա երկրորդ կեսին: Ցուցահանդեսի մասնակից հյուրերին, ներկաներին բարենախթանքի խոսք հղեցին հանրապետության ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, «100 գաղափար ԱՊՀ-ի համար» ծրագրի փորձագետների խորհրդի նախագահ Վալենտինա Դինիչև (Բելառուս), ԱՊՀ գործադիր կոմիտեի մշակույթի, սպորտի, տուրիզմի և երիտասարդության դեպարտամենտի հումանիտար համագործակցության, ընդհանուր բաղաձայն և սոցիալական պոլիտեսների բաժնի պետ Տատյանա Կովալեան, ով հրապարակեց ԱՊՀ-ի գործադիր կոմիտեի նախագահի Սերգեյ Լեբեդեվի ուղերձը՝ ԱՊՀ ստեղծման 30-ամյակի կապակցությամբ: Տասնիորդ իրավունքով ներկաներին ողջունեց Կապանի քաղաքապետի տեղակալ Գոռ Թադևոսյանը: Նրանք մասնավորապես շնորհակալություն հայտնեցին «100 ծրագիր ԱՊՀ համար» ծրագրի կազմակերպիչներին, նոր նախագծերի ցուցարման հարթակի հնարավորություն ընձեռելու, նման շնորհանդես կազմակերպելու համար: Երեկոյան հյուրերի համար մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում տրվեց համերգ՝ մշակույթի կենտրոնի և մարզկենտրոնի այլ

մշակույթի օջախների ստեղծագործական խմբերի մասնակցությամբ:

Հոկտեմբերի 12-ը «100 գաղափար ԱՊՀ-ի համար» երիտասարդական միջազգային մրցույթի վերջին օրն էր: Օրվա ընթացքում փորձագետների խորհուրդը, որի կազմում ընդգրկված էին երեք ներկայացուցիչ Հայաստանից, մեկական Ռուսաստանից և Բելառուսից, ընտրում էին յուրաքանչյուր անվանակարգի լավագույն գաղափարը: ԱՊՀ երկրներից 50 հայտ էր ներկայացվել, որից վեցը Հայաստանից: Ընդհանուր առմամբ՝ 12 անվանակարգերում հաղթողներ եղան. երկուը Հայաստանը ներկայացնողները ստացան: Մասնավորապես, մեր երկրից հաղթող է ճանաչվել «Ուսանողի տուն» ծրագիրը, որի մասին «Այոնյաց երկիր» մանրամասներ ներկայացրեց ծրագրի համահեղինակ Դիանա Գալստյանը. ««Ուսանողի տուն» հովանավորվում է գործում է «Հզոր միտք» հասարակական կազմակերպության ներքո և ունի երկու գլխավոր նպատակ՝ ուսանողների կրթության ապահովումը ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով և կրթության տեսակետից համաչափ զարգացած մարզեր ունենալը»:

Մրցանակաբաշխության ավարտից հետո հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը միջոցառման



վերաբերյալ իր խոսքը ներկայացրեց «Այոնյաց երկիր». «Ուրախ եմ, որ ԱՊՀ խորհրդի նիստը և «100 գաղափար ԱՊՀ-ի համար» երիտասարդական միջազգային մրցույթի եզրափակիչ փուլն անցկացվեց ոչ թե մայրաքաղաք Երեւանում, այլ հանրապետության երիտասարդական մայրաքաղաք Կապանում: Համաժողովին մասնակցում էին պատվիրակներ ԱՊՀ յոթ երկրից, և չնայած համավարակի հարուցած դժվարություններին, բացի Դաշնաստանից, բոլորը ներկա էին, իսկ Դաշնաստանը մասնակցեց հեռավար: Շատ կարեւոր էր, որ հյուրերը տեսնեին, թե ինչ երիտասարդություն ունենք Կապանում՝ Երեւանից այսքան հեռու: Ուղղակի կոչ եմ անում հանրապետության երիտասարդությանը՝ զբաղվել նորարարությամբ, փորձել գտնել մեր կյանքի տարբեր խնդիրների լուծումները՝ նորարարական մտքի կիրառմամբ, և դրանք առաջարկել պետությանը»:

Միջոցառումից տպավորված էին նաև հյուրերը: Յուլիանա ժազպարովան (Մոսկվա) շնորհակալություն հայտնեց Կապանի ղեկավարությանը՝ ջերմ մթնոլորտ ստեղծելու և անմիջականության համար՝ «Մենք այստեղից մեկնում ենք երախտագիտության զգացումը սրտներումս և անմոռաց տպավորություններով»:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

**Նժդեհյան առաջնորդող ոգու պանծացումը  
«Սյունյաց Երկրում»**

Թորգոմազարմ մեր ազգը, որ ողիսեւայան մաքառումներով բազմիցս է անցել սփյուռյալի եւ բարիքդայի արանքով, որ ոճոխքի հատակը տեսել էր երկրի երեսին, այսօր կրկին աղետաբեր ժամանակներ է ապրում: Եվ այսօր, առավել քան երբեք, երբ վիրավոր են մեր մարմինն ու հոգին, ազգային Ռգին սնուցող ու ոյուցազնազնող հրաշագործներ են պետք:

Անառարկելիորեն այդպիսին է մեր ազգային գաղափարախոսության շահակիր ու ռազմի բոցաշունչ աստված հիշեցնող հայ մեծագույն այրերից մեկը՝ Գարեգին Նժդեհը. «Ուր էլ եւ երբ էլ մենեմ, հավատմ, իմ ազիզ



ժողովուրդ, որ արտաքին վտանգներիդ ժամանակ իմ անհանգիստ հոգին այցի եւ օգնության պիտի փութա իր հայրենի աշխարհին եւ աներեւութաբար քո բանակներին առաջնորդե...»:

Ասպետական երդմանտվությունը հիշեցնող նժդեհյան այս խոսքերն ու Կապանում հանձնած նրա հուշահամալիրի գունագեղ պատկերն են զարդարում «Սյունյաց Երկիր» մշակութային» հայրենաշունչ թերթի ճակատը՝ ընթերցողին ասես կանխավ հուշելով, որ պարբերականի սովորածավալ այս լուսբանդայում առանձնակի նպատակ, ասելիք եւ խորհուրդ ունի: Եվ դա, հիրավի, ստույգ զգացողություն է, բանգի թերթի 52 էջերն ամբողջությամբ հագեցած են ու շնչում են Նժդեհով: Մեծ հայրորդու գրական-գեղարվեստական ժառանգությունը, նրա անզուգական կերպարի մեկնություններն ու ցոլացումներն են սբանչելի այս մտահոգացման տիրույթներում:

«Ոչ մի տեղ առանց Սյունիքի ու Արցախի. առանց աշխարհագրական ճաշաստանի այր հզոր ողնաշարի մեր ամբողջական հայրենիքը գոյություն ունենալ չի կարող...» - Նժդեհյան սույն մարգարեությունն ընտրելով որպես թերթի առանձնահատուկ այս համարի առաքելությունն ընդարձակ խոսքով մեկնաբանության խորագիր, գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանը շեշտում է նման հրատարակման շարժառիթը. «2021 թ. ապրիլի 26-ին լրացավ Յայոց պատմության 20-րդ դարի հերոսական խոյանքի՝ Լեռնահայաստանի անկախության հռչակման 100-րդ տարեդարձը, եւ չէինք կարող չանդրադառնալ դարակազմիկ այդ իրադարձության գլխավոր կերտողին ու ռեզնեջողին: Յայոցը՝ հատկապես Արցախն ու Սյունիքը 2020 թ. Նոյեմբերի 9-ից ու դեկտեմբերի 18-ից հետո հայտնվել են ռազմաքաղաքական այնպիսի իրավիճակում, որ Նժդեհյան գաղափարների ռզնեջումը պահի գլխավոր հրամայականներից է: Չնուանալսե՛ք՝ այդ գաղափարախոսությունը շարունակում է մնալ իբրեւ զոնտության կրք, իբրեւ լինելիության բանաձև, իբրեւ պատմության դասերի սերտելու պատգամ...»:

Մեր ժողովուրդն իր անմահ գավակին ճանաչում է որպես զորավորի, ազգային ու պետական գործիչ, որպես Ցեղակրոն շարժման հիմնադիր, որպես բարաբազետի ու մտածողի, որպես հայրենասիրության, ազատության ու արժանապատվության համար մարտնչող ասպետի: Թերթի այս համարը, սակայն, միտված է «գոնե համառոտ» ներկայացնելու նրա գրական-գեղարվեստական ժառանգությունը

ու Չորավարի «անզուգական կերպարի մեկնությունները հայոց մշակութային աշխարհի տիրույթներում», քանի որ, ինչպես Նժդեհագիտության երախտավոր Ռաֆայել Յամբարձումյանի խոսքով խմբագիրն է հավաստում, «Գարեգին Նժդեհի գրավոր ամբողջ ժառանգությունը, լինելով նրա հանճարի փայլատալաններից մեկը, իր պատկերավոր մտածողությամբ, անկասկած, գեղարվեստական գրականությամբ է»:

Քչերիս է հայտնի, որ զորավարը նաեւ արձակ եւ չափածո ստեղծագործություններ է գրել, որոնք մամուլի էջերից, արխիվներից կարողացել է հավաքել, ի մի է բերել ու ժամանակին հրատարակել Նոյն Ռ. Յամբարձումյանը: Այս ստեղծագործություններից տարբեր էջերում փնջեր են ներկայացված որպես Նշխար ու համեմունք:

Յայտնի է, որ Նժդեհի կերպարը գեղարվեստական գրականություն մտնելու «իրավունք» ունեցավ նախկին կայսրության փլուզմանը զուգընթաց ու դրանից հետո: Առաջինը Սերո Խանգույանի «Նժդեհ» վեպն էր, որին հաջորդեց Արման Ամիրխանյանի «Սպիտակ արծիվը»: Այս գրքերից բերված հատվածներին եւ կարող առանց հուզմունքի: Խոսքն այն մի բուռ հողի մասին է, որը հայրենապաշտ հայրորդին իր հետ տարել էր աքսորավայր եւ որով ապրում էր...

Ծավալուն հողվածով ներկայացված է կենսագրական ակնարկ Նվիրյալի մասին, հարցազրույցներ նրա կերպարը կերտած քանդակագործների, երգիչ, պարուսույց վաստակաշատ արվեստագետների, գրականագետների հետ, Չորավարին նվիրված երգերի, բանաստեղծությունների տեքստեր, նրա սիրած երգերը, մանրամասներ Բակունցի սցենարով նկարահանված «Չանգեզուր» կինոնկարի մասին՝ Նժդեհի կերպարին առնչվող արձարծումներով: Փաստարկվում է, որ մեծն Արամ Խաչատրյանի 2-րդ սիմֆոնիան նվիրված է անկուորում Աստանդականին: Առանձնակի հափշտակությամբ է կարողացվում Սերո Խանգույանի հուշապատումն այն մասին, թե ինչպես է Մեծ հայրենակակից նոր վերադարձած գրողը հանդիպել ու զրուցել Նժդեհի հետ:

Ընդգրկուն ծավալով ներկայացված են Չորավար-գաղափարախոսի աշխատությունների մատենագիտությունը, Նժդեհական ուփոսավորների այցելությունները սրբատեղի դարձած վայրեր, որտեղ հանգչում են նրա մատուցները, լուսանկարներ ու գեղանկարչական աշխատանքներ, պատկերներ ծննդավայրից, կենդեցիներ, որոնց առնչվել է Սպարապետն ու դրանցում կայացրել ճակատագրական վճիռներ:

Ծանոթանում եւ «Սյունյաց Երկիր. մշակութային» եւ չես կարողանում թաքցնել զարմանքը ու հիացումը՝ ինչպիսի տքնաշան աշխատանք, պաշտամունքի հասնող սիրո ու նվիրումի ինչպիսի ողբերգություն Սյունյաց աշխարհի փրկարար ու ազգի ոգին ամուր պահող Չորավարի հանդեպ՝ բանդակային այսպիսի պարբերական արարելու համար: Սա թերթային սովորական թողարկում չէ, այլ՝ իր տեսակի մեջ եզակի երեսույթ, որն արժանվունս ներկայացնելը պատվաբեր կլինի այն հեղինակողի համար: Ասելս այն է, որ թերթի սույն համարն ավելին է, քան մեր խոսքում ասվածը: Պարզապես այն կարող է պետք եւ ըմբռնելն էլ առ էլ, կյուք առ կյուք, հողված առ հողված: Այդ դեպքում ինքը էլ կըզվես քո ազգի մեծանուն գավակով, նրա սբանչելի կերպարը վերստին կորաձվի քո ամայացած հայաբուն, եւ կըզենաս սեղմել այն անխոնջների օրինված ձեռքը, ովքեր ջանացել են բարձրակարգ այս արարումի վրա:

Այդպես էլ անենք՝ շնորհակորնք ու սեղմենք պատվարժան խմբագրի՝ Սամվել Ալեքսանյանի ձեռքը՝ Սյունյաց լեռների գորդությունն իրեն ու երկրամասն անառիկ պահող բոլոր հայորդիներին: Նժդեհի ոգին ասպակեն Յայոց աշխարհին, ամենքին:

30.09.2021, HHPRESS.AM



**Յամաժողով պատերազմի տարելիցի օրը**

«Յավատամք» հայ բաղաբարկթական շարժումը եւ Երեւանի պետական համալսարանը իրականացնում են «Սյունիքը բաղաբարկթությունների միջնաբերդ» ծրագիրը, որ հետամուտ է քննարկել ու բացահայտել ժամանակակից բաղաբարկթության ճգնաժամի խորքային պատճառները, ներկա ու գալիք մարտահրավերները են այդ ամենի հաղթահարման ուղիներն ու միջոցները: Միջոցառմանը հրավիրված էին ներկայացուցիչներ Յայաստանից, ինչպես նաեւ գիտնականներ Ռուսաստանի Դաշնությունից և այլ երկրներից:

Ծրագրի շրջանակում սեպտեմբերի 27-ին Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում անցկացվեց համաժողով, որը վարում էր Երևանի պետամալսարանի դասախոս, դոցենտ Վարդան Խաչատրյանը: Բացման խոսքով հանդես եկան Երեւանի պետամալսարանի ռեկտորի պաշտոնակատար Յովհաննես Յովհաննիսյանը (հեռավար մասնակցությամբ), Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանը: Սյունիքի մարզպետ Սեվիլեթ Պողոսյանի ողջույնի խոսքը հրապարակեց Սյունիքի մարզպետարանի գլխավոր բարտուղար Էդգար Մարտիրոսյանը: Դարձվակների վասահայր հայր Ներսես աբեղա Յարությունյան Արցախի թեմի առաջնորդ, գերաշնորհ տեղ Կրոնական եպիսկոպոս Աբրահամյանի օրհնությունը և ողջույները փոխանցեց համաժողովի մասնակիցներին:

Յամաժողովը սկսվեց Ռուսաստանի Դաշնության բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Լեռն Բեկյարյանի «Մեծ Սյունիք. Բաղաբարկթական եւ աշխարհաբաղաբարկան նշանակությունը, հիմնական սպառնալիքները» թեմայով զեկուցմամբ (հեռավար սկզբունքով):

«Յավատամք» հայ բաղաբարկթական շարժման հիմնադիր Գայանե Ափիլյանն իր ելույթում, մասնակորապես, Նշեց, որ հայ ազգն ունի յուրօրինակ առաքելություն բաղաբարկթական անցման այս բարդագույն ժամանակաշրջանում, և մեր պարտականությունն է ամբողջ խորությամբ գիտակցել այդ առաքելության իմաստը և իրականացնել մեր ներուժի սահմաններում:

Ժամը 11-ին ներկայները մեկ ըրպե լուծարամբ հարգեցին 44-օրյա պատերազմի նահատակների հիշատակը: Յամաժողովի մասնակիցներն այնուհետեւ եղան Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, որտեղ պատարագ մատուցվեց մերօրյա զոհերի հիշատակին: Այնուհետև նրանք բարձրացան Բաղաբարկթի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու 44-օրյա պատերազմի նահատակների հիշատակին:

Օրվա երկրորդ կեսին հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

Յր կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հնագիտության բաժանմունքի վարիչ, արվեստագիտության դոկտոր, պատմական գիտությունների թեկնածու Յակոբ Սիմոնյանն անդրադարձավ Գորայքում իրենց անցկացրած պեղումների արդյունքներին:

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Մինասյանը (հեռավար) թվերով ու փաստերով ներկայացրեց 2020թ. Արցախյան պատերազմի ընթացքը մինչև Նոյեմբերի 9-ի համաձայնագիրը՝ նաև Նշելով այն երկրների անունները,

որոնց զինվորներն ու զինուժը մասնակցում էին Արցախյան կազմում:

Պատմաբան, մշակութաբան, կրոնագետ Վարդան Խաչատրյանն իր ելույթում ներկայացրեց քրիստոնեության և իսլամի համեմատական վերլուծությունը, նմանություններն ու տարբերությունները:

Յր ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Արսեն Յարությունյանի զեկուցումը Տաթևի վանքին էր վերաբերում, որպես Սյունյաց հոգևոր-մշակութային կենտրոն: Բանախոսը մասնավորապես անդրադարձավ Տաթևի վանքի և հարակից հուշարձանների 2018-2021 թթ. վիմագրագիտական ուսումնասիրություններին:

Յամաժողովի մասնակիցներն ուշադրությամբ ունկնդրեցին պատմաբան, պրոֆեսոր Իսրայել Չարնիի (Իսրայել) իր երկրի՝ հայոց ցեղասպանության հանդեպ որդեգրած բաղաբարկթությունը: Ի դեպ, նրա զեկուցման վերնագիրն ամեն ինչ ասում է. «Իսրայելի ճահողած արձագանքը հայոց ցեղասպանությանը. ժխտում, պետական խաբեություն, ճշմարտություն ընդդեմ պատմական բաղաբարկթական»:

Պատմաբան Արմեն Շահբազյանն իր զեկուցման համար կյուք էր ընտրել Սյունիքի պատմության այն հատվածը, որ առնչվում է Դավիթ Բեկի ազգային-ազատագրական շարժմանը: Մի հետաքրքրական փաստ հարդրեց. Կրաստանից Յայաստան գալով՝ Դավիթ Բեկն իր պայքարը սկսեց հավատափոխ մեկիքների իշխանությունը և ազդեցությունը չեզոքացնելով: Երանցից մեկին էլ ստիպում է վանքում գիշեր ու ցերեկ կարող «Յայր մեր» արդթը: Բանակցով մշտապես աղեկցվում էր հոգևորականներով, ովքեր արդթում էին կռվողների համար: Բանախոսը հանգել էր մի եզրակացության. մարդկային բաղաբարկթությունը կառուցված է հոգևոր արժեքների վրա, այլ ոչ թե կյուքական ձեռքբերումների, և հայերի պայքարը միշտ հաջողել է, երբ նրանք կռվել են հավատքի արժեքները պահելու համար:

Յր ԿԳՄՍ նախարարության պատմության ու մշակույթի հուշարձանների պահպանության վարչության գլխավոր մասնագետ, պատմաբան Վիգեն Ծատրյանի զեկուցումը մտորումներ էին՝ իր ձևակերպմամբ՝ «Արարատից Արմազեդուն. մտորումներ ժամանակի ու տարածության հերթական խաչմերուկում»:

Ցանկություն հնչեց համաժողովի ընթերցումները մեկ տեղում հավաքված եւ հրատարակված տեսնել, ինչը լավ գիտական հիմք ու կյուք կդառնա Սյունիքն ուսումնասիրողների համար:

Յամաժողովը ներառում էր նաև մշակութային միջոցառումներ: Սեպտեմբերի 27-ին Կապանի արվեստի պետական քոլեջի Վահան Ստամբոլյանի անվան երգեհոնային դահլիճում տեղի ունեցավ համեղ՝ մասնակցությամբ երգեհոնահարներ Մարինա Նահապետյանի, Թերեզա Ոսկանյանի, Յարություն Ռազվորյանի, Արմեն Աղաջանյանի: Յնչեցին Բախի ստեղծագործություններից, ինչպես նաև հայ հոգևոր երաժշտություն:

Յայոց օրը Կապանի ժամանակակից արվեստի թանգարանում կազմակերպվեց զեղանկարչուհի Նինա Աղաբեկյանի անհատական ցուցահանդես, որի բացմանը մասնակցեցին ինչպես համաժողովի մասնակիցները, այնպես էլ արվեստասեր կապանցիներ:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

# Բաբվից սկսած՝ ներկայիս Ադրբեջանի բոլոր տարածքները եղել են հայանուն, հայաբնակ ու հայկական. ակադեմիկոսը՝ Ալիևին

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հայտարարությունները Հայաստանի տարածքների վերաբերյալ բացահայտ կեղծիք են և մանիպուլյացիա՝ տարածաշրջանը թուրքական-ադրբեջանական ներկայացնելու նպատակով: «Արմենյա-րես»-ի հետ զրույցում այս մասին սասց ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը՝ մեկնաբանելով Քարվաճառում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի արած հայտարարությունները Հայաստանի սուվերեն տարածքների՝ Սյունիքի, Սևանի և Վարդենիսի մասին:

Պատմաբանի խոսքով՝ Ալիևն ասում է, թե իբր Սյունիքը, Սևանը, Վարդենիսը, Երևանը «պատմական ադրբեջանական հողեր են», մինչդեռ նախ՝ ներկայիս Ադրբեջան կոչվող հանրապետության տարածքը ոչ մի կապ չունի պատմական Ատրպատականի՝ Իրանի հյուսիսային շրջանների հետ, որից թուրքերը պարզապես գողացել են անվանումը՝ 1918 թ. այդ արհեստաձին պետությունը ստեղծելիս: Եվ երկրորդ՝ մինչև 14-15-րդ դդ., երբ տարածաշրջան ներթափանցեցին թուրքմենական ցեղերը, և առավել ևս՝ մինչև 11-րդ դ., երբ առաջին անգամ տարածաշրջանում հայտնվեցին սելջուկ-թուրքերը, մեր տարածաշրջանում՝ ներառյալ Արևելյան Հայաստանը, Վրաստանը, Արևելյան Անդրկովկասը և Հյուսիսային Իրանը, թուրքական որևէ տեղանվանման կամ թուրքական տարրի մասին խոսելը պարզապես ծիծաղելի է:

«Ուրեմն, Ադրբեջանի Բաբու մայրաքաղաքից սկսած՝ Ատրպատականի, Շաքիի, Շիրվանի, ամբողջ «Հայրոց Արևելից Կողմաց», այսինքն՝ Մեծ Հայքի Ուտիք, Արցախ, Փայտակարան նահանգների տարածքները՝ բոլորը եղել են հայանուն և հայաբնակ ու հայկական, որտեղ խոսել թուրքական որևէ տարրի մասին մինչև 11-րդ դարը ուղղակի ծիծաղելի է», - ընդգծեց Աշոտ Մելքոնյանը: Պատմության ինստիտուտի տնօրենն իր այս ակնարկը հիմնավորում է պատմական այն հայտնի փաստերով, որ մինչև 14-15-րդ դդ., երբ Արևելյան Հայաստան և Արևելյան Անդրկովկաս ներթափանցեցին թուրքմենական ցեղերը, առավել ևս՝ մինչև 11-րդ դարը, երբ առաջին անգամ մեր տարածաշրջանում հայտնվեցին թուրքական ցեղերը՝ ի դեմս սելջուկ-թուրքերի, որևէ թուրքական տեղանուն այս տարածաշրջանում չի եղել: «Հատուկ են թուրքեր տարածաշրջանում հայտնվել են միայն 9-րդ դարում, երբ արաբները վարձել են թուրք վարձկան-գիսվորականների, որոնց թվում էր, օրինակ, հայտնի գորավար Բուրան, որը 9-րդ դ. կեսերին արշավեց Հայաստանի շրջաններով՝ Վասպուրականով, Սյունիքով և Արցախով և ծանր պարտություն կրեց հատկապես Արցախում՝ Զօրջ ամրոցում (854 թ.) Եսայի Աբու Մուսե իշխանից», - հավելեց մասնագետը: «Ընդհանրապես Արևելյան Հայաստանի և Արևելյան Անդրկովկասի տեղանունների թուրքացման գործընթացը սկսվել է 14-15-րդ դդ., երբ թուրքմենական ցեղերը այստեղ հաստատեցին իրենց տիրապետությունը: Օրինակ, Հյուսիսային Իրանի տարածքի իրանախոս բնակչությունը աստիճանաբար դարձավ թուրքախոս: Թեպետ այդ թուրքախոս բնակչությունն էլ հետագայում 15-րդ դարի վերջին, կյանքի կոչեց իրանական Սեֆյան պետությունը: Սեֆյանները, լինելով պարսիկ, թուրքախոս էին: Եվ, բնականաբար, այս երևույթը նկատվեց նաև Արևելյան Հայաստանի տարածքում: Բայց դա բացարձակապես չի նշանակում, թե դրանից առաջ այդ տեղանունները հայկական չէին: 14-15-րդ դդ. առաջ, առավել ևս՝ 11-րդ դ. առաջ, որևէ թուրքական տեղանուն այս տարածաշրջանում չէիք կարող գտնել», - ասաց Մելքոնյանը: Պատմաբանը նաև նկարագրեց, թե ինչպես է տեղի ունեցել տեղանունների թուրքացումը նշված ժամանակաշրջանում քոչվոր-

ներին հատուկ պարզունակ ոճով և նրանց ցածր մտավոր կարողություններին համապատասխան: «Թուրքերը ինչպես որ տեսնում էին տվյալ տարածքը, այդպես էլ կոչում էին: Ասեց, եթե պոտոր ջուր էր լինում՝ «Կարա-Սու» էին անվանում, կամ երեք եկեղեցի էին տեսնում՝ դառնում էր «Ուլ Զիլխե», տեսնում էին չորս եկեղեցի՝ դառնում էր «Պոր Զիլխե» և այդպես շարունակ»:

«Այնպես որ, այն, ինչ այսօր ասում է Ալիևը, բացահայտ կեղծիք է և մանիպուլյացիա՝ տարածաշրջանը թուրքական-ադրբեջանական ներկայացնելու նպատակով», - եզրակացրեց Աշոտ Մելքոնյանը:

Քաղաքակիրթ աշխարհը և այդ թվում՝ գիտական հանրությունը, պատմաբան Աշոտ Մելքոնյանի խոսքով, շատ լավ գիտի այդ ամենը և հասկանում է, որ ադրբեջանական պատմագրությունն ամբողջությամբ կեղծված է և իրական գիտության հետ որևէ կապ չունի: Բայց այլ հարց է, որ Ադրբեջանը, գործի դեպքում իր ֆինանսական միջոցները, տարածում է այդ կեղծիքներն ամբողջ աշխարհով մեկ այն հաշվարկով, որ «եթե սուղը 100 անգամ կրկնես՝ այն կարող է ճշմարտություն թվալ»:

«Համեմալեղեք, կարծում եմ, որ քաղաքակիրթ աշխարհի մեծագույն մասը, մասնավորապես Նկատի ունեմ Եվրոպան, Միացյալ Նահանգները, Ռուսաստանը՝ իրենց մտավորական շրջաններով և մասնագիտական հանրություններով հանդերձ, շատ լավ գիտեն իրական պատմությունը: Երբ առիթ է ներկայանում, օրինակ՝ ռուսաստանցի մտավորականները, միշտ ասում են, որ ծիծաղելի է խոսել ադրբեջանական հնագույն մշակույթի մասին, որովհետև դա շինծո, թուրքացած իրանական էլեմենտի հիմքի վրա Արևելյան Անդրկովկասում ստեղծված կեղծ մշակույթ է, Էլ չեմ ասում նաև քաղաքական հանրույթ՝ ի դեմս այսպես կոչված Ադրբեջանական Հան-



Պատվետության», - ընդգծեց գրուցակիցը:

Աշոտ Մելքոնյանի խոսքով՝ ադրբեջանցիները և Ադրբեջան կոչվող պետությունն այսօր ինքնուրույն փոքրաթիվ մեջ են, քանի որ գրպանել են իրենց գրեթե բոլոր հարևանների՝ հայերի, վրացիների, լեզգիների, իրանցիների և Նույնիսկ ցեղակից թուրքմենների պատմությունն ու մշակույթը: Եվ այդ խառնաշփոթն այն աստիճանի անհեթեթության է հասել, որ մի կողմից իրենց համարում են կովկասյան Աղվանքի ժառանգներ, այսինքն՝ տեղաբնիկներ, մի կողմից՝ հնդեվրոպական, մյուս կողմից էլ՝ թուրքալեզու, որովհետև արյունակից են միջինասիական ժողովուրդներին և օսմանյան թուրքերին:

Մեր հարցին՝ ո՞րն է ադրբեջանցիների ճիշտ ինքնանվանումը, պատմաբանը պատասխանեց՝ «կովկասյան թաթարներ»: Եվ ավելացրեց. «թաթար» իմաստով նշանակում

Է «քոչվորներ»: Ինչ վերաբերում է հարցի քաղաքական կողմին՝ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը կարծում է, որ ինչպես Ալիևի սանձարձակ հայտարարությունները «Հանագուլուի միջանցքի», Սևանի, Երևանի, հիմա էլ՝ Վարդենիսի մասին, այնպես էլ առհասարակ Ադրբեջանի ագրեսիվ և ռազմատեղյակ վարքագիծը սահմանին պայմանավորված է այն հանգամանքով, որ Թուրքիան և Ադրբեջանը, օգտվելով 44-օրյա պատերազմում արձանագրած հաջողություններից, կարծում են, թե հիմա ամենահարմար պահն է պակթուրքիզի ծրագիրը կյանքի կոչելու համար:

Սակայն Պատմության ինստիտուտի տնօրենը հանգել է այն եզրակացությանը, որ Հայաստանի Հանրապետությանը բացի՝ տարածաշրջանում կան նաև այլ գործը ուժեր, մասնավորապես՝ Իրանը և Ռուսաստանը, որոնց ամենևին էլ ձեռնադրել չէ այսպես կոչված «Հանագուլույան միջանցքը»՝ անկախ նրանից, թե ինչ են դրա տակ հասկանում Բաբուն և Ասկարան:

«1921 թ. հունիսի կեսերին Հանագուլուից Գարեգին Նժդեհի հեռանալուց հետո խորհրդային պետության ձեռքը ոչ ոք չէր կարող բռնել, եթե նա որոշեր Հանագուլուը հանձնել Ադրբեջանին: Եթե չարեց, ուրեմն հասկանում էր, որ այդ հայկական սեպը պակթուրքիզի ճանապարհին ամենամեծ խոչընդոտն է», - եզրակացրեց Մելքոնյանը:

Իլհամ Ալիևը օգոստոսի 17-ին, Արցախի Հանրապետության՝ ադրբեջանական հսկողության տակ անցած Շահումյանի շրջանի (պատմական հայկական Վայկունիք գավառի) քարվաճառ քաղաքում ադրբեջանական դրոշ բարձրացնելու արարողության ժամանակ, հայտարարել էր, թե իբր Վարդենիսի շրջանի (ՀՀ Գեղարքունիքի մարզ) «խկական անունը» «Բասարգեչար» է, և կոչ էր արել ադրբեջանցի լրագրողներին և քաղաքացիներին այսուհետ իրենց ռեպորտաժներում և խոսակցական լեզվում Վարդենիսի փոխարեն օգտագործել այդ տեղանունը: Ալիևը չի խոչընդոտում հերթական անգամ, այսպես կոչված, «Հանագուլուի միջանցքի» մասին խոսելուց՝ հայտարարելով, թե իրենք այդ «միջանցքը» կօգտագործեն՝ ադրբեջանցիներին «Հանագուլու և Սևան վերադարձնելու» նպատակով:

ԱՐԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ

## Մեր ձեռքի տակ կան բազմաթիվ փաստաթղթեր, որոնք վերաբերում են տարածքներին, որոնք եղել են Հայաստանի վերահսկողության տակ, հետո տրվել են Ադրբեջանին

■ Lragir.am-ի գրուցակիցն է ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը

- **Պարոն Մելքոնյան, Գորիս-Կապան ճանապարհին ստեղծված իրավիճակն ինչպե՞ս պետք է լուծել: Իշխանության ներկայացուցիչները հողում են անում ԽՍՀՄ քաղաքացիներին, ի՞նչ այլ հնարավորություններ կան:**

- Այսօր Ադրբեջանի հետ դեյմիտացիա և դեմարկացիա անելը ձեռնադրել է միայն Ադրբեջանին: Այսօր նման բայլ անելը կնշանակի կորցնել այդ ամբողջ տարածաշրջանը, այսինքն՝ այդ ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհը հանձնել Ադրբեջանին: Դեյմիտացիան ինքը ենթադրում է կողմերի համաձայնություն ասպագա սահմանների վերաբերյալ փաստաթղթի շուրջ: Եթե այդ դեյմիտացիան պիտի գա հանգի, որ պետք է լինի Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի սահմանների, այսպես ասած, քարտեզներով, բնականաբար մենք դրանից կտուժենք: Դրա համար ես ասում եմ, որ մենք պետք է Նույնիսկ առաջնորդվենք 2020 թվականի Նոյեմբերի 9-ի այդ չարաբաստիկ հայտարարությամբ, որի մեջ ասվում է, որ կողմերը պետք է կանգ առնեն այնտեղ, որտեղ ռազմական գործողությունները դադարել են: Իսկ այդ սահմանագծով, բնականաբար, Շուռնուկի այդ ամբողջ ճանապարհը մեր վերահսկողության տակ էր: Մենք այս հարցում զիջեցիք և հայտնվեցիք այս վիճակում:

- **Կա՞ն այսօր հնարավորություններ՝ ադրբեջանցիներին դուրս մղելու ՀՀ տարածքից:**

- Հիշելուց հետո, երբ հակառակորդը շահեկան դիրքում է, այս խնդիրը լուծե-

լը բավականաչափ դժվար է: Բայց եթե կա պետություն, որը պետք է երաշխավորի մեր անվտանգությունը, բնականաբար, ուժային կառույցները պետք է մտածեն այն մեթոդների ու եղանակների մասին, որոնցով պետք է խնդիրը լուծվի:

- **Հայաստանը կարող է բարձրացնել 1920-ական թվականների քարտեզներով սահմանազատում իրականացնելու հարցը:**

- Այնքանով կարող է դա անել, որ Հայաստանը, գտնվելով Անդրդաշնության մեջ, 1922 թվականի մարտի 12-ից սկսած, երբ իր սուվերենության առեղծիքի բաժինն անցավ Անդրդաշնությանը, բնականաբար, Խորհրդային Հայաստանն այլևս լուրջ եղանակ ստեղծելու հնարավորություն չունի: Մեր ձեռքի տակ կան բազմաթիվ փաստաթղթեր, որոնք վերաբերում են տարածքներին, որոնք եղել են Հայաստանի վերահսկողության տակ, հետո տրվել են Ադրբեջանին: Օրինակ՝ Վարդենիսի շրջանի տարածքների մասով հայկական կողմը բողոքել է, հետո Անդրկովկասյան դաշնության կենտրոնական կոմիտեից պատասխան կա, որ՝ «հակառակ ձեռք բողոքներին, խնդիրը վերջնականապես լուծված է»: Այսինքն՝ փաստ է, որ 1920-ական թվականներին, օգտվելով Հայաստանի ավելի թույլ վիճակից, մեզ դրել են ծանր վիճակի մեջ: Եթե իրավական տեսանկյունից փորձենք դիտարկել խնդիրը, ապա ճշման տակ ընդունված որոշումները, բնականաբար, միջազգային իրավունքի տեսանկյունից ընդունելի չեն: Եվ այդ առումով մեր իրավաբանները պետք է լուրջ աշխատանք կատարեն: Պետք է փորձեն բոլոր այն որոշում-

ներում, որոնք 1920-30 ական թվականներին կատարվել են ի վնաս մեզ, կատարել շտկումներ: Ինչո՞ր, որովհետև դրա հետևանքով մենք բախվեցինք նաև, այսպես կոչված, անկավների հետ: Անկավների, որոնք մեր ռազմավարական ճանապարհների վրա են գտնվում: Աստված մի արասցե, դրանց հանձնումն Ադրբեջանին կնշանակի, որ դեպի Հյուսիս տանող ճանապարհները կփակվեն՝ դեպի Վրաստան: Խոսքը վերաբերում է Նոյեմբերյանի և Իջևանի շրջանների անկավներին: Մյուսն էլ հայտնի Տիգրանաշենն է, որը ռազմավարական ճանապարհի վրա է գտնվում, որը տանում է դեպի Սյունիք, Արցախ և Իրան:

- **Իսկ Ազգերի Լիգայի և Փարիզի վեհաժողովի փաստաթղթերին հղում անելու հնարավորություններն ինչպե՞ս եք գնահատում:**

- Միջազգային իրավունքի տրամբն ուսումնասիրելով՝ պետք է անպայման գտնել խնդրի լուծման տարբերակ: Որովհետև, օրինակ, Նույն Ազգերի Լիգայի կողմից մենք ճանաչված երկիր ենք եղել, մենք Փարիզի վեհաժողովի իրավիճակով կողմ ենք եղել, ՀՀ ներկայացուցիչը՝ Ավետիս Ահարոնյանը ստորագրել է այդ փաստաթուղթը: Այնպես որ, մենք միջազգային իրավունքի սուբյեկտ ենք եղել: Եվ, բնականաբար, մեր շահերն այսօր պաշտպանելու տեսանկյունից ունենք որոշակի կռիվներ՝ հիշեցնելով, որ երբ մենք գոյություն ունեինք որպես անկախ Հանրապետություն, միջազգային մեր իրավունքներն ընդունված է հարկված էին, որոնք, սակայն, խորհրդայնացումից հետո անտեսվեցին:

02.10.2021

# Իրանը չի հարցնի Հայաստանի կարծիքը, և ինքը գորք կմտցնի` Հայաստան, որպեսզի թույլ չտա թուրքերին ու ադրբեջանցիներին` կտրել Հայաստանն Իրանից

**Սկզբը` էջ 1**

վարժություններ», գրում են թալիշական ռե-տուրսները:

Հայաստանում Իրանի դեսպանատունը մեջբերել է Իրանական «Տամ-Է-Ջամ» թերթի հոդվածը, որում ասվում է. «Ի պատասխան թուրքական «Անադոլու» լրատվամիջոցին տրված հարցազրույցի ընթացքում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի` Իրանի դեմ հնչեցված մեղադրանքի` «Ինչու՞ 30 տարիների ընթացքում, երբ Ղարաբաղի շրջակա տարածքները հայերի տիրապետության տակ էին, Իրանի հյուսիսային շրջաններում գորավարժություններ չէին անցկացվում», իրանական «Տամ-Է-Ջամ» օրաթերթը հոդված է հրապարակել, որից բերված են մի քանի մեջբերումներ. «Հայաստանը Բաբելի և Անկարայի նման Իրանի սահմանների նկատմամբ սին երազանքներ չունի և նման պահվածք չի ցուցաբերում, Հայաստանը, ի տարբերություն Ադրբեջանի, Իսրայելի դաշնակիցը չէ, Հայաստանն Ադրբեջանի Հանրապետության նման Ադրպատականում չի ստեղծել վարձկան-անջատողականների ցանց, Հայաստանը նպատակ չունի Իրանին առևտրական ճանապարհներին ղուրս մղելու»:

Յոգվածի հեղինակը նշում է, որ «Ադրբեջանի նախագահի ոչ դիվանագիտական պահվածքը և թուրքական ՀԼՄ-ների միջոցով Իրանին ուղերձ հղելը գաղութացման նշան է»:

\*\*\*

Վկայակոչելով farsnews.ir-ն, ԻԻՀ ԱԳ նախարարը, մասնավորապես, հայտարարել է, որ Լեռնային Ղարաբաղում վերջին պատերազմի ընթացքում ահաբեկչական որոշ հոսանքներ են տեղափոխվել «այս ճգնաժամային տարածաշրջան»։ «Սիոնիստական ռեժիմն էլ փորձեց հնարավորինս օգտագործել ստեղծված առիթը և Իրանի սահմաններին մոտ գտնվելու համար Ադրբեջանի որոշ հատվածներում ներկայություն ապահովեցին: Մենք հենց այդ ժամանակ քաղաքական, ռազմական, անվտանգային մակարդակներում դիվանագիտական խողովակներով մեր մտահոգությունները հայտնեցինք», – ընդգծել է ԻԻՀ ԱԳ նախարարը և հավելել. «Ադրբեջանի հետ լավ ու զարգացող հարաբերություններ ունենալը մեր ուշադրության կենտրոնում է, բայց մեր սահմանների հարևանությանը սիոնիստական ռեժիմի տարրերի ներկայությունը չենք հանդուրժելու, տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխությունը, սահմանների փոփոխությունը չենք կարող հանդուրժել, մենք դրա նկատմամբ մեծ զգալունություն ունենք»:

Խոսելով իրանցի վարորդների ձերբա-

կալման մասին, Աբրովլահիանը նշել է. «Ես Նյու Յորքում հանդիպեցի Ադրբեջանի արտգործնախարարի հետ: Դիվանագիտական ճանապարհով այդ հարցի առնչությամբ մեր մտահոգությունը փոխանցեցի, հստակ ասացի, որ եթե ի վերջո որոշվել է հարկեր գանձել, սահմանափակումներ ստեղծել, ապա դիվանագիտական խողովակներով, դեսպանատան միջոցով մեզ պետք է տեղեկացնեք, որ, օրինակ, ըստ Ադրբեջանի նոր օրենքների, 15 օրից, 40 օրից գործելու են այս նոր կարգավորումները: Միաժամանակ իրանցի վարորդների ձերբակալումը բացատրություն չունի, այդ վարքագիծը չի կարող դրական մեկնաբանվել: Սակայն մեր կառավարության քաղաքականությունը հարևանների հետ հարաբերությունների զարգացումն է: Ադրբեջանում արտաքին միջամտությունները մեզ համար շատ պարզ չեն, այդ թվում սիոնիստների ու ահաբեկիչների խաղերը: Մենք շատ ենք անհանգստանում, որ ոչ հեռու ապագայում Ադրբեջանի իշխանության համար սիոնիստներն ու ահաբեկիչները խնդիրներ կստեղծեն:

Վերջին օրերին գորավարժության անցկացմամբ սիոնիստներին ու ահաբեկիչներին ուղերձ հղեցինք: Իհարկե, Ադրբեջանի նախագահը Իրանի հասցին բացասական խոսքեր էր ասել, և մենք դիվանագիտական ճանապարհով մեր բողոքը հայտնեցինք: Ադրբեջանի դեսպանի հետ հանդիպանքը ես այդ նկատառումներն ասացի, նշեցի, որ ձեր դրությունը ըմբռնում ենք, սիոնիզմի ու ահաբեկիչների վտանգը ձեր տարածքում և ձեր ու հարևան երկրների դեմ հասկանում ենք, և անկակալում ենք, որ Ադրբեջանի պաշտոնյաները կշտկեն այդ հայտարարությունները: Ի վերջո երկու ժողովուրդները վաղեմի հարաբերություններ ունեն, և չպետք է թույլ տալ, որ արտաքին խաղացողները ազդեն երկու երկրների հարաբերությունների վրա: Դիվանագիտական խողովակներով, այդ թվում Ադրբեջանի դեսպանի հետ հանդիպանքը դրական ուղերձներ են ստացել: Կարծում եմ այս փուլն անցնում ենք և շուտով տարանջաման խնդիրների վերաբերյալ բնարկումներ ենք ունենալու:

Աշխարհաքաղաքական իրադրության վերաբերյալ մենք մեծ զգայունություն ունենք: Մենք Ադրբեջանին հստակ ասել ենք, որ Իրանը ուշադրության է հետևում և այդ զարգացումներին, տարածաշրջանում սահմանների փոփոխությունը մեզ համար ընդունելի չէ: Սակայն իրականությունն այն է, որ այս զարգացումների հետևում արտաքին դերակատարներ են, սիոնիստներն ու ահաբեկիչները, որոնք ցանկանում են անկայունություն առաջացնել տարածաշրջանում: Մենք առա-

վելագույնս օգնելու ենք, որ Ադրբեջանը, որը մեր լավ հարևանն է, չընկնի այդ թակարդը և սիոնիստների ու ահաբեկիչների գործունեության դաշտի չվերածվի, և տարածաշրջանի երկրների միջազգայնորեն ճանաչված սահմաններում փոփոխություններ չլինեն: Իրանն Ադրբեջանի մեծ հարևանն է և դիվանագիտական ճանապարհով ուղերձներ ենք փոխանակել և շատ լավատես ենք: Հնարավոր է` Ադրբեջանի պաշտոնյաները թշնամու գործողությունների ազդեցության տակ են ընկել և նրանց որոշ հայտարարությունների արձատներն այդտեղից են սկիզբ առնում: Սակայն մենք մեծ զգայունությամբ ու վճռակամությամբ հետևումու ենք այս խնդրին և, տա Աստուծո, շուտով տարանջաման ճանապարհին ստեղծված խնդիրները նախատեսված միջոցառումներով կվերացվեն»:

\*\*\*

Իսլամական հեղափոխության պահպանների կորպուսի ցամաքային զորքերի հրամանատար, բրիգադի գեներալ Մոհամմադ Փաթեպուրը նախագուշացրել է հարևաններին, որպեսզի նրանք թույլ չտան «սիոնիստական ռեժիմին օգտագործել իրենց երկիրը որպես ապաստան»:

Փակպորտ, բնակատեղի Ադրբեջանին, որը Իսրայելի մարտական անօդաչու թռչող սարքերն օգտագործել է Հայաստանի հետ վերջին պատերազմի ժամանակ, ասել է, որ Իրանի հարեանները պետք է թույլ չտան, որ նման «սիոնիստական ռեժիմը իրենց երկիրն օգտագործի չար ու հանցավոր նպատակների համար»: «Կասկած չկա, որ սիոնիստական ռեժիմը օգնում է առաջադրանքների որոշ երկրներին՝ մասնաշրջանային երկրների միջև տարածայնություններ ստեղծելու համար», – ասել է նա:

Նա նախագուշացրել է, որ երկրների միջազգային սահմաններին ցանկացած խնդիր անապայման նոր հակամարտություններ եւ լարվածություն կառաջացնի, հատկապես, եթե նման խնդիրները ստեղծվեն իսրայելական ռեժիմի նպատակների ծառայեցնելու համար: «Մենք երբեք թույլ չենք տա հարեան երկրին նման խնդիրների ստեղծման եւ տարածման համար աղբյուր եւ բազա դառնալ», – ընդգծել է նա:

Հարեան պետությունների սահմանների ցանկացած փոփոխություն կանխելուն ուղղված ջանքերը Իսլամական Հանրապետության առաջնահերթ քաղաքականությունն են վանելով՝ հրամանատարը նշել է. «Մենք կարծում ենք, որ տարածաշրջանում ցանկացած աշխարհաքաղաքական փոփոխություն խաթարում է մեր ներքին անվտանգությունը, եւ դա միշտ համարել ենք կարմիր գիծ:

Ուստի, բնական է, որ մենք սրա հանդեպ անտարբեր չենք մնա»:

**01.10.2021**

Իրանի արտգործնախարար Ամիր Աբդուլաիանը հեռախոսազրույց է ունեցել Ադրբեջանի ԱԳ ղեկավար Տեյհոմն Բայրամովի հետ՝ ընդգծելով, որ Թեհրանում անկակալում են Գորիս-Կապան ավտոճանապարհով անցնող իրանական բեռնատարների հարցի լուծում: Չրոյցը կայացել է Ադրբեջանի և Իրանի միջև վերջին շաբաթներին սրված հարաբերությունների ֆոնին:

«Ընդգծելով պետությունների անկախությունը, ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը փոխադարձաբար հարգելու կարևորությունը՝ Բաբուն և Թեհրանը կապված են վաղեմի և կայուն հարաբերություններով: Մենք չպետք է թույլ տանք, որ մեր միջև թյուրըմբռնումներ լինեն, անհրաժեշտ է հարաբերությունները տանել ամրապնդելու և ընդարձակելու ճանապարհով», – RegionMonitor-ի փոխընթացմամբ, նշել է Իրանի արտգործնախարարը:

Հեռախոսազրույցի ընթացքում Հոսեյն Ամիր Աբդուլաիանն անդրադարձել է նաև Իրանից Հայաստան ձգվող ճանապարհի՝ Ադրբեջանի տիրապետության տակ անցած հատվածներում ի հայտ եկած խնդիրներին: Մի քանի շաբաթ է՝ Բաբուն մաքսատուրքեր է պահանջում Գորիս-Կապան մայրուղու՝ այդ 21 կիլոմետրանոց հատվածով անցնող իրանցի վարորդներից, երկուսին էլ ձերբակալել է՝ ապօրինի Ղարաբաղ այցելելու համար:

«Թեհրանն անկակալում է, որ տարանցիկ բեռնատարների հարցը կլուծվի», – շեշտել է Աբդուլաիանը:

«Թեհրանն ու Բաբուն թշնամիներ ունեն և չպետք է հնարավորություն տան, որ այդ թշնամիները փչացնեն երկկողմ հարաբերությունները: Տարածայնությունները պետք է կարգավորվեն երկխոսության ու համագործակցության ճանապարհով», – հավելել է Աբդուլաիանը: **13.10.2021**

Իրանն իր տրամադրության տակ ունի փաստաթղթեր, որոնք հաստատում են այն, որ Ադրբեջանի Հանրապետության տարածք են փոխադրվել ահաբեկչական խմբավորումներ: Ինչպես հարդորում է «Արմենպրես»-ը՝ այդ մասին, ըստ IFP News-ի, Իրանի ազգային ռադիոյի հետ հարցազրույցում այս մասին հայտարարել է Իրանի ԱԳՆ խոսնակ Սաիդ Խատիրբազդեն՝ հավելելով, որ իրենց ձեռքում նույնիսկ ահաբեկիչների խոսակցությունների ձայնագրությունները կան:

«Մենք ասել ենք ադրբեջանական կողմին, որ դա անընդունելի է, և նրանք բարձրաստիճան զինվորականները խոստացել են հաշվի առնել մեր մտահոգությունները», – ասել է Իսլամական Հանրապետության արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչը: **12.10.2021**

# Չանգեզուրի պղնձամուլիբդենալիում նոր ժամանակներ են սկսում

**Սկզբը` էջ 1**

հանգիստներ ու բազմաֆունկցիոնալ բիզնես կենտրոններ Եվրոպայում: Ըստ Forbes-ի՝ Տրոցենկոյի ունեցվածքը գնահատվում է 1,3 միլիարդ դոլար:

2014-ում բաժնետոմսերի այս փոփոխությունն ըստ էության չի ազդել մյուս բաժնետերերի ունեցած մասնակցության չափի վրա. «Չանգեզուր մայկինգ» ընկերության միջոցով կոմբինատի 12,4 տոկոսը պատկանում է Ռուսաստանի առողջապահության և սոցիալական հարցերի զարգացման նախկին նախարար Միխայիլ Չուրպանովին, իսկ 12,5 տոկոսը՝ «ԱՄՓ հոլդինգ» ընկերությանը, որի սեփականատերերն են Կարեն Հակոբյանը՝ Աժ «Հայաստան» դաշինքի պատգամավոր Վահե Հակոբյանի եղբայրը, Միեր Պոլոսկովը՝ կոմբինատի նախկին գլխավոր տնօրենն ու Լարել Ամբարյանը՝ զինվորական դատախազ Տիգրան Ամբարյանի եղբայրը:

Կոմբինատում բաժնետոմսերի առյուծի բաժինը ձեռք բերելու նպատակին էր ձգտում նաև Միխայիլ Չուրպանովը: Չուրպանովը «Չանգեզուր մայկինգ»-ի միջոցով մի քանի դատական հայց էր ներկայացրել ընդդեմ 2014-ի՝

պահանջելով նախկինում «Քրոնիմետ»-ից հետ գնված բաժնետոմսերը նախապատվության իրավունքով օտարել իրեն: Փաստացի, կոմբինատի բաժնետոմսերի հերթական խոշոր գործարքը շրջանցել է Չուրպանովին, ու նա չի կարողացել բաժնետոմսերի ձեռքբերմամբ դառնալ մեծամասնական բաժնետեր: Դատական հայցերի ճակատագիրը դեռևս անորոշ է:

2014-ում պետական բաժնեմաս ունենալը կառավարությանը թույլ է տալու մասնակցել բաժնետերերի ժողովներին, նաև կոմբինատի տնօրենների խորհրդում ունենալ ձայներ:

\*\*\*

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է «Գեոպրոմայկինգ» ընկերության տնօրենների խորհրդի անդամ Ռոման Տրոցենկոյին: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին հայտնում են ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ մակրամասնելով, որ գրուցակիցները քննարկել են 2014-ի կողմից նախատեսվող նոր ներդրումային ծրագրերն ու նախագծերը:

«Որոշումում եմ Ձեզ, առաջին հերթին

ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Հայաստանի Հանրապետության ընկերության 25 տոկոսի նվիրաբերման համար, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությանն է անցել 2014-ի կապիտալի 15 տոկոսը: Հույս ունենք, որ այն բոլոր պայմանավորվածությունները, որոնք ձեռք են բերվել՝ կիրականացվեն և կյանքի կրկնվեն, ինչը շատ կարևոր է ոչ միայն Ձեր ընկերության, այլ նաև մեր տնտեսության համար: Գոտում ենք, որ պայմանավորվածությունների իրականացումը կնպաստի Հայաստանի տնտեսության ամրապնդմանը և զարգացմանը», – ասել է Նիկոլ Փաշինյանը:

Իր հերթին Ռոման Տրոցենկոն շնորհակալություն է հայտնել Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի նկատմամբ մշտական ուշադրության համար, որտեղ վերջին տասնամյակների ընթացքում կուտակվել են բազմաթիվ խնդիրներ:

«Մենք ուրախ ենք ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ, ինչը թույլ կտա կայունացնել կոմբինատի շուրջ իրավիճակը, Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում իրականացնել երկարաժամկետ լայնամասշտաբ ներդրումային ծրագրեր, որոնց ընդհանուր ծավալը կհասնի շուրջ 4 մլրդ դոլարի: Դա թույլ կտա վերականգնել արտադրանքը, կառուցել նոր արտադրամասեր, որպեսզի Հայաստանն արտադրի պղինձ, այլ

ոչ թե խտանյութ, ինչպես նաև՝ նոր ատոմային էլեկտրակայան: Ծրագրերի արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր և հնարավորություններ, ինչը կբացի զարգացման նոր ուղիներ», – ասել է նա:

Վարչապետը նկատել է, որ պղնձածուլանի կառուցումը կհանգեցնի էլեկտրաէներգիայի ծավալների նոր պահանջարկի:

«Ծրագրերի հաջող իրականացումը շատ կարևոր է մեզ համար, և հույս ունենք, որ դրանք նոր ազդակ կհաղորդեն Հայաստանում նոր առումային էլեկտրակայանի կառուցման ծրագրի իրականացմանը: Հայաստանի Հանրապետությունը հետաքրքրված է նման նախագծով և կօժանդակի դրա առավել արդյունավետ իրականացմանը», – նշել է Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետը վստահություն է հայտնել, որ ՀՀ կառավարությանն ընկերության 25 տոկոսի նվիրաբերումը, ինչը կազմում է 2014 ընդհանուր կապիտալի 15%-ը, կկապտի մասնավոր հատված-պետություն համագործակցության ընդլայնմանը, 2014-ի հետագա արդյունավետ գործունեությանը:

Չրոցենկոյիցները կարևորել են ծրագրերի ժամանակին և հնարավորինս արագ իրականացումը և պայմանավորվել ակտիվորեն համագործակցել այդ ուղղությամբ: **02.10.2021**



# Հավերժ փառք Արցախյան պատերազմում նահատակված հայոց քաջորդիներին



**Արթուր Արզակյան. նահատակվեց մարտական առաջադրանքը կատարելիս**

Արթուր Աամվելի Արզակյանը ծնվել է 1987 թվականի հունվարի 7-ին Գորիս քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Գորիսի թիվ 5 դպրոցում: 2005 թ. զորակոչվել է հայկական բանակ: Ավարտելով ծառայությունը, վերադարձել է Գորիս, ամուսնացել է Մարիաննա Մարությունի հետ. ունի մեկ որդի:

2011 թվականին աշխատատեղի է ընդունվում ՀՀ ՊՆ N զորամասում՝ ռադիոհեռագրող: Մասնակցել է 2016 թ. ապրիլյան բառորյա պատերազմին:

2018թ. տեղափոխվել է ՀՀ ՊՆ հատուկ նշանակության զորամաս, աշխատել հետախույզ:

Արթուրին ճանաչողները նրան բնութագրում են լավագույն բառորով, առանձնացնում խիզախությունը, որով օժտված էր մանկության տարիներից:

«Արթուրի համար զինվորական լինելը կենսաձև էր, նա կիրթ ու խելացի զինվորական էր, պահանջկոտ ու պարտաճանաչ: Մարտկային լավագույն հատկանիշներն ուներ, մենք լավ ընկեր ենք կորցրել, հայրենիքը՝ անվախ պաշտպան: Ծառայության ընթացքում շատ անգամ է պարգևատրվել իր արիության ու անկասկածով ծառայության համար, աննկարագրելի ցավ է նման ընկեր կորցնելը...», – պատմում են ծառայակից ընկերները:

2020թ. սեպտեմբերի 27-ին Արթուրը պատերազմ սկսեց. Արթուրը պատերազմը սկսելու առաջին օրից զինակից ընկերների հետ մեկնել է Մեխակավան: Չոհվել է 2020թ. սեպտեմբերի 30-ին՝ մարտական առաջադրանք կատարելու ժամանակ:

Ամիսներ շարունակ հարազատները հույս են փայփայել, որ Արթուրին ողջ կգտնեն, որ նրա զոհվելու գուցե չի հաստատվի, ավմը, 2021 թ. փետրվարի 20-ին, ՊՆ հետազոտությունը հաստատեց Արթուրի զոհվելու փաստը: Զերոսացած Արթուր Արզակյանի աճյունը հողին է հանձնվել 2021 թ. փետրվարի 22-ին Գորիսի զինվորական պանթեոնում: **##**



**Էդվարդ Դանիելյան. զոհվեց առանց իմանալու, որ որդի է ունենալու**

Դանիելյան Էդվարդ Գառնիկի. ծնվել է 1983 թ. հուլիսի 15-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի թիվ 27 միջնակարգ դպրոցում: Էդվարդի հայրը՝ Գառնիկը, անժամանակ էր մահացել ու միակողմանի ծնողա-

զուրկ Էդվարդը ծառայել էր Գորիսում: Աշխատում էր Կապանի լեռնահարստացման կոմբինատում՝ մեքենավար: Ամուսնացած էր՝ ունի 2 երեխա: Էդվարդը 2006 թվականին էր ընտանիք կազմել, 13 տարի երիտասարդ ընտանիքը զավակ ունենալու մասին էր երազել, վերջապես իրականացել էր երազանքը՝ ծնվել էր որդին, և Էդվարդին ու Կարինեին թվում էր, թե աշխարհում ոչինչ չի կարող խանգարել իրենց անսահման երջանկությանը:

2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսվեց պատերազմը. Էդվարդը վայրկյան իսկ չկարանեց՝ միացավ հայրենիքի պաշտպանությանը: Եղբայրը ցավով է հիշում այդ օրերը, երկուն էլ առաջնագծում էին, հոկտեմբերի 14-ին էր Սուրենը վերադարձել Ջրականից /Ջաբրայիլ/, նույն օրն էլ Էդվարդն իջել էր Քաջարանին մերձակա դիրքերից ու մեկնել Արցախ: Եղբայրները, հնարավորության դեպքում, զանգահարում էին իրար, խոսում, խորհուրդներ, հույս ու կորով փոխանցում միմյանց:

Զոհվածների 18-ին եղբայրը պիտի իմանար բոլոր՝ Էդվարդը զոհվել է, զոհվել է առանց իմանալու, որ Աստված իրենց ընտանիքին երկրորդ երջանկություն է պարգևեց, որ կինն իրենց երկրորդ զավակին է սպասում...

Համարձակություն են հավաքում Կարինեի հետ գրուցելու, նա Էդվարդի անունն ավիսներ անց էլ հեկեկալով է արտասանում. «Բառեր չկան, որ նկարագրեմ, նա լավագույն ամուսինն էր, նա լավագույն հայրն էր, նա վազուցույն մարդն էր...»:

Էդվարդի մարտական ուղու, զոհվելու հանգամանքների մասին մեզ պլուսեցի մի այլ քաջ երտասարդ՝ Ավետ Չակոբյանն է պատմում. «Էդվարդի հետ ծանոթացել եմ սեպտեմբերի 28-ին Գեղիկի դիրքերում, հոկտեմբերի 14-ին մեկնել ենք Արցախ, հոկտեմբերի 15-ի լուսաբացին ստացել ենք մարտական առաջին առաջադրանքը: Էդվարդի ժպիտն է մեջս տպավորվել ու անկեղծությունը, պատերազմի ժամանակ ամեն մեկն իրեն մի տեսակ է դրսևորում, յուրաքանչյուրը յուրովի է ներկայացնում իր զգացածը՝ մեկը լռում է, մի ուրիշը՝ գրկու է գրկում. Էդվարդն անկեղծ ասում էր, որ վախենում է այս կյանքում կոչն ու երեխային մենակ թողնել, ամբողջ ընթացքում իր ընտանիքի մասին էր մտածում: Զոհվածների 17-ի գիշերը «մարտի» հրամանից հետո դուրս եկանք, որ դիրքավորվենք, բայց թշնամու անօդաչուներն անմիջապես սկսեցին ուժեղանում: Արկերից մեկն Էդվարդին շատ մոտ ընկավ, նա աչքին առաջ գոհվեց: Այդ ցավը մոռանալ կամ սփռվել չի լինի...»:

Էդվարդի աճյունը զինվորական պատիվներով հողին է հանձնվել հոկտեմբերի 20-ին Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Կարինեի ու Էդվարդի կրտսեր որդին լույս աշխարհ է եկել հունիսի 9-ին, Կարինեն նրան հերոսացած հայրիկի անունով է կոչել՝ Էդվարդ Էդվարդի Դանիելյան: **##**



**Պարույր Եսայան. նա թիկունք էր իրեն ճանաչողների համար**

Պարույր Արամայիսի Եսայան. ծնվել է 1972 թ. հոկտեմբերի 14-ին Սիսիանի շրջանի Անգեղակոթ գյուղում: Սովորել է Ան-

գեղակոթի միջնակարգ դպրոցում: Հայկական բանակի առաջին զորակոչի զինվորներից էր. նոր ձեռավորվող բանակում շատ բան էր պակաս, բայց տեղն էր ոգին, որը պիտի հաղթանակների ձգտում ու հաղթանակ ձևեր: Պարույրը հետախույզական ջոկի հրամանատար էր, սեղմ ժամկետներում կարողացել էր լավ հետախույզի համբավ վաստակել...

Չորագրվելուց հետո մեկնել է Ռուսաստան, երկար տարիների համար աշխատանքով հասել բազմաթիվ հաջողությունների: Բայց շարունակել է մնալ հայաստանական ջոկի հրամանատար էր, սեղմ ժամկետներում էր Հայաստանում, իր հարագատ Անգեղակոթում լինելու համար: Ոչինչ չէր կարողացել կորել արմատներից, ոչինչ չէր կարողացել պակասեցնել նրա սերը գյուղի ու համազրուհցիների հանդեպ:

«Մենք իրար համար ու իրարով էինք ապրում... Չկա մեկը, որ ասի՝ դիմել է Պարույրին ու օգնություն չի ստացել: Նա չափազանց հայրենասեր էր, Ռուսաստանում էր ապրում, երբ լսեց պատերազմի սկսվելու մասին, վերադարձավ ու մեկնեց Մարտակերտ՝ Երկիրներ: Մենք գիտեինք, որ նա ընկերների խոստացել է վտանգի պահին միանալ իրենց, այդ պատճառով էլ չառարկեցինք:

Երիտասարդ տարիներին ցանկանում էր ռազմական օդաչու դառնալ, նույնիսկ դիմել էր, հետո մորս հորդորով հրաժարվեց այդ մտքից:

Պարույրը մի սովորություն ուներ՝ հետախույզության միայնակ էր գնում, օրվա մեջ պայմանավորված ժամ ունեինք իրար զանգահարելու համար, զանգերից մեկի ժամանակ ավիացիոն հարձակում սկսվեց, լսում էի՝ ինչպես էր եղբայրս գոռում՝ մտքե թաքստոցները, սպա նրա հառաչը լսեցի՝ զինանոցին խփեցին: Հասկացա, որ նրա համար հաղթելուց բացի ճանապարհ չկար, հասկացա, որ այդ պահին նրա համար ամենաթանկն իր կողքին կռվողների կյանքն է:

Վերջին անգամ զանգեց, սասց, որ գործողության է գնում ու մի բանի օր անհասանելի է լինելու: Զոհվածների 26-ին լսեցինք զոհվելու բոթը...», – պատմում է եղբայրն ու փորձում պինդ մնալ, թաքցնել հուզմունքը:

Պարույրի մասին բոլորն են ցանկանում մի բան պատմած լինել. ընկերները, ովքեր նրա հետ ուրախ ու տխուր պահեր են կիսել, մարդիկ, ովքեր ճանաչել են նրան ու հպարտանում են նրա հետ ծանոթ լինելու փաստով, համազրուցակները... Բոլորի խոսքում կարմիր թելով անցնում է մի միտք՝ «Պարույրը թիկունք էր իրեն ճանաչողների համար»:

Սեռակը՝ Պարույրի մանկության ընկերը, իրենց ընկերության ու Պարույրի մարդ տեսակի մասին ասելիքը մանկության վերինը չով է սկսում. «Նույն դասարանում ենք սովորել, ինքը Պարույրն էր, ես՝ Սեռակը... Ինքը փոքր տարիքում էլ էր տարբերվում, փոքրուց էլ հերոս էր: Կյանքում ամեն բանի հասել էր: Ամուսնացած չէր, երեխաներ չուներ, բայց ինքը երեխաներին, երեխաներն՝ իրեն յուրահատուկ սիրով էին սիրում: Զումորով, հասնող, օգնող, նվիրված ընկեր էր, ավելին էր, բան ընկերը, հարագատ էր՝ այդ բառի լայն իմաստով:

Սեպտեմբերի 27-ին եկավ, սասց, որ մեկնում է Արցախ: Պարույրն իր որոշումները բնարկելու սովորություն չուներ, դրա համար էլ չառարկեցինք:

Չանգահարում էր, խոսում էինք. վերջին հետախույզարույցում սասց՝ մի բանի օր անհասանելի են լինելու, բայց անպայման գալու են, նույնիսկ օր լռեց, իր նշած օրը զոհվեց...»:

Նրանք, ովքեր տեսել են Պարույրին մարտադաշտում, նշում են, որ նրա կողքին վստահ ու ապահով էին զգում. «Տարիներ շարունակ ձեռնարկատիրական գործունեությամբ էր զբաղվել, բայց իրեն հմուտ զինվորականի պես էր դրսևորում՝ կարգապահ էր, ինքնավստահ, որոշումներ ընդունելու, իր հետեւից տանելու կարողություն ուներ: Զետախույզության միայնակ էր գնում, վերջին

անգամ էլ միայնակ էր գնացել, կատարել էր մարտական խնդիրն ու վերադառնալիս դիտարկվող տարածքում թշնամին նկատել էր նրան և դիպուկահարները կրակ էին բացել, ծանր վիրավորվել էր: Ես շատերին եմ տեսել մարտադաշտում, յուրաքանչյուրը պատերազմին մասնակցելու իր պատճառն ունի. նրա մոտ պատճառ չէր, զաղափար էր, այո, նա ազատ Արցախի գաղափարը վեր էր դասում ամեն ինչից: Այդպիսի մարդիկ պիտի ապրեն, պիտի սերունդներ ունենային, պիտի իրենց հայրենասիրությունը դաստիարակության միջոցով ավանդեն իրենց երեխաներին: Ինձ ճիշտ հասկացե՛ք՝ մարդու մահը միշտ է ցավալի, բայց առավել ցավալի է, երբ հայրենիքն այդքան սիրող, հայրենիքի համար ոչինչ չխնայող մարդիկ են զոհվում...»:

Պարույր Եսայանը զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 26-ին:

Զերուսի աճյունն ամփոփված է Անգեղակոթի պանթեոնում: **##**



**Չաբարյան Անդրանիկ. Շուշիի մատուցներում զոհված 18-ամյա նորակոչիկը**

Չաբարյան Անդրանիկ Աամվելի. ծնվել է 2002 թվականի հունիսի 25-ին Ագարակ քաղաքում, սովորել է Վարդանիճորի հիմնական դպրոցում, Մեղրիի պետական քոլեջում:

2020 թ. հուլիսի 19-ին զորակոչվել է բանակ, ծառայել Մարտունու, ապա՝ Զադրութի զորամասերում:

Անդրանիկի մասին մեզ հայրն է պատմում. ձայն, որում եղած ցավից արյունը մի պահ սառչում է երակներում, «Իմ ավագ որդին էր, իմ օգնականը, իմ հույսը, ամեն տեղ, ամեն հարցում ինձ համար սյուն էր: Փոքր հասակից ինձ նեցուկ է եղել, աշխատասեր, բարի, ներողամտ: Տղայիս ժպիտը, տղայիս աչքերը, նրա ձայնը, ամբողջ աչքիս առաջ է, ակնքներումս է: Աչքերս չեն չորանում, սիրտս չի դիմանում, ուզում եմ մեկը լինի, որ որդուս վերջին օրերի մասին ինձ պատմի, բայց չկա, նրա ընկերները նրա պես Շուշիի մոտ ընկան: Իմ որդին մի աշխարհ էր, իմ որդին դեռ երեխա էր, անտանելի ցավ է...»:

Անդրանիկը դեռ նոր էր զինվորական երդում տվել, նոր պիտի հարմարվեր զինվորական ծառայությանը, երբ սկսվեց պատերազմը:

Դեռ երեկ «կյանքով կպաշտպանեմ հայրենիքս» բառերն արտասանած երիտասարդը սեպտեմբերի 27-ին ընկերների հետ կանգնեց դիմակայելու թուրք-ադրբեջանական բանակին ու անհաբեկիչ վարձկաններին: Դիմագրավեց 44 օր. կռվեց Զադրութում, Կարմիր շուկայում, Շուշիում: Կռվեց հաղթանակի հավատով, կռվեց իր երկրի ու իր խաղաղ կյանքի իրավունքի տերը լինելու հաստատ համոզմունքով:

44 օր պատերազմի դաժանությունը տեսած 18-ամյա Անդրանիկը զոհվել է հրադարից ժամեր առաջ՝ նոյեմբերի 9-ին, Շուշիի մոտ:

18-ամյա Անդրանիկ Չաբարյանի աճյունն ամփոփվել է Վարդանիճորի գերեզմանատանը՝ նոյեմբերի 18-ին:

**ԷՏԻ ՆՅՈՒԹԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ ՏԻՊՈՒՆՈՒԻ ԲԱԴԱԼԱՆԸ**

### Պատերազմի մասնակից ուսանողները և սոցիալական խմբերն ուսման վարձի գեղչեր կատանան նոր կարգով

Մարտական գործողություններին մասնակից ուսանողներին, մարտական գործողությունների մասնակիցների ուսանող զավակներին, կնոջը կամ ամուսնուն, համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունած որոշման՝ հատկացվել է մեկ կիսամյակի ուսման վարձի փոխհատուցում:

«Այս ծրագրի շրջանակում արդեն մեկ կիսամյակի ուսման վարձի փոխհատուցում են ստացել 4200 մասնակից ուսանողներ, 2000 մասնակիցների զավակներ և 613 ամուսիններ (կանայք): Ընդհանուր առմամբ ավելի քան 7000 շահառու ստացել է մեկ կիսամյակի ուսման վարձի 100 տոկոս փոխհատուցում: Այս ծրագրով ուսման վարձի փոխհատուցման գործընթացը կշարունակվի նաև 2022 թվականին՝ հաշվի առնելով, որ դեռևս կան պատերազմի մասնակից ժամկետային զինծառայողներ, որոնք չեն զորացրվել, - «Արմենարես»-ի փոխանգամար՝ այս մասին հայտնում են ԿԳՄՍ նախարարությունից:

Միաժամանակ ուսման վարձի փոխհատուցումը շարունակական դարձնելու և այն որպես սովորողի հիմնական իրավունք ամրագրելու նպատակով Կառավարության նախաձեռնությամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բարձրագույն և ինտերմիդիում մասնագիտական կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքներում: Օրենսդրական փոփոխություններն ուժի մեջ են մտել ընթացիկ տարվա օգոստոսի 16-ին: Ըստ այդմ Կառավարությունը պետք է ընդունի համապատասխան կարգ, որով մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորողների առանձին խմբեր կօգտվեն ուսման վարձի լրիվ կամ մասնակի գեղչերից՝ ըստ առաջադիմության:

ԿԳՄՍ նախարարությունից հայտնում են, որ մշակել են «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» նոր նախագիծ, որն այժմ ներկայացված է այլ շահագրգիռ գերատեսչությունների համաձայնեցմանը, և ակնկալվում է, որ կընդունվի մինչև հոկտեմբեր ու կտարածվի 2021 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցում տրամադրվում է հետևյալ ուսանողներին.  
■ ՀՀ կառավարության հաստատած տեղեքի քանակին համապատասխան՝ մեկ ուսումնական տարվա քննությունների

և ստուգաթղթերի արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով՝ հաշվի առնելով նախորդ կիսամյակի կամ տարվա միջին որակական գնահատականի (ՄՈԳ) ցուցանիշները,

- առանց ծնողական խնամքի մասցած երեխաներին և դրանց թվին պատկանող միջև 23 տարեկան անձանց,
- 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի,
- ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի,
- գոհված (մահացած) զինծառայողների միջև 27 տարեկան զավակներին, ծնողներին, ամուսնուն (կնոջը)՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի,
- պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին:

Նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրվում է հետևյալ խմբերին.

- ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին,
- սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ուսանողներին,
- մարտական գործողությունների մասնակցած ուսանողներին,
- առկա ուսուցմամբ բակալավորի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով սովորող երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին:

Վերը նշված խմբերն ուսման վարձի գեղչից օգտվելու համար պետք է ապահովեն ՄՈԳ-ի որոշակի շեմ. վարձավճարի գեղչը կավելանա ՄՈԳ-ի ցուցանիշի բարձրացմանը զուգահեռ:

Նշվում է, որ ուսման վարձի փոխհատուցման արտոնությունները տարածվում են նաև նախնական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների վրա:

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1569-Ն որոշմամբ հաստատված՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի 4-րդ կետի համաձայն՝ «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի Լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝  
■ ՀՀ բաղաբացիությունը,  
■ ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր)՝ Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝  
■ դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով,  
■ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնակազման քարտի պատճենը,  
■ հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,  
■ տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան,  
■ ինքնակենսագրություն:  
Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ բարոտուղարին առնչված ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Ռ. Մելիքյան 2-ում, 2021 թվականի հոկտեմբերի 12-ից մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 18:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:  
Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը 15:00-ին,  
**«Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Ռ. Մելիքյան 2-ում:**  
Տեղեկությունների համար դիմել՝ **(374 285) 2 48 91, (374 93) 72 97 57, art.kollej@mail.ru:**

**ԿՈՐԵԼ Է** Կապանի բժշկական ուսումնարանի 1993 թ. շրջանավարտ Լուսինե Գառնիկյանի Ավագյանի դիպլոմը՝ CT-1 N 25873(սերիա): Համարել անվավեր:

**ԿՈՐԵԼ Է** ՀԽՍՀ Գորիսի շրջանի Վերինքենի Խ.Երիցյանի անվան սովորող-տեխնիկումի 1994 թ. շրջանավարտ Արտակ Վաղիկի Աղամյանի N 480512 դիպլոմը՝ անասնաբույժի որակավորմամբ, առկա/ ցերեկային/ ուսուցմամբ: Համարել անվավեր:

### Ի՛նչ իրավունքներ և արտոնություններ ունեն հաշմանդամություն ունեցող անձինք

Հաշմանդամության սահմանման նպատակով՝ անձին բուժում կամ սպասարկում իրականացրած բժշկական կազմակերպությունն ուղեգրում է բժշկասոցիալական փորձաքննության՝ հիվանդության, վնասվածքի կամ խեղման հետևանքով օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարման առկայության դեպքում: Հաշմանդամությունը սահմանվում է մեկ, երկու, հինգ տարի ժամկետով, մինչև անձի 18 տարին լրանալը և անժամկետ:

Այս մասին հայտնում են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից:

Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն հետևյալ իրավունքներն ու արտոնությունները.

- ընդգրկված են բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում, կարող են օգտվել

անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու արտոնություններից (Կառավարության 2004 թ. մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշում, հավելված առաջին),

- ներառված են անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի ցանկում. 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք օգտվում են անվճար դեղեր ձեռք բերելու արտոնությունից, իսկ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցողները՝ կարող են 50% զեղչով ձեռք բերել դեղորայք, եթե

չեն օգտվում առավել արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունքից (ՀՀ կառավարության 2019թ. մայիսի 30-ի թիվ 642-Ն որոշում),

- ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք ունեն պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ ընդունվելու իրավունք (վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում),
- անվճար էլեկտրատրանսպորտից օգտվելու իրավունք,
- վերականգնողական անհատական ծրագրի (ՎԱԾ) հիման վրա աջակցող միջոցներ/պրոթեզներ, օրթեզներ, հենակներ, սայլակներ, քայլակներ, լսողական սարքեր, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ և այլն/ ստանալու իրավունք (ՀՀ կառավարության 2015 թ. սեպտեմբերի 10-ի թիվ 1035-Ն որոշում):

### Անտառամերձ բնակավայրերի բնակիչներին կտրամադրվեն թափուկ վառելիքայտի օրենքով սահմանված չափաքանակներ

Շրջակա միջավայրի նախարարության նախաձեռնությամբ Շրջակա միջավայրի, Էկոնոմիկայի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարների համատեղ իրավունքով լրացվել է ոչ արտադրական նպատակներով անվճար թափուկ վառելիքայտ ձեռք բերելու արտոնություն ստացող՝ անտառների անմիջական հարևանությամբ գտնվող համայնքների/բնակավայրերի ցանկը:

Թափուկ վառելիքայտ անվճար տրամադրվում է սույն իրավունքով սահմանված բոլոր բնակավայրերի բնակիչներին, եթե մոտակա անտառահատվածներում առկա է բավարար քանակությամբ թափուկ վառելիքայտ:  
Ցանկում նշված 8 մարզերի (Լոռվա, Տավուշի, Կոտայքի, Սյունիքի, Արագածոտն, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Շիրակի) անտառամերձ համայնքների/բնակավայրերի բնակիչներին թույլատրվում է սահմանված կարգով «Հայաստառ» ՊՈԱԿ-ի համապատասխան անտառնտեսության մասնաճյուղերից և ազգային պարկերից մթերել և անվճար ձեռք բերել մինչև 8 խմ թափուկ վառելիքայտ:  
ՇՄ նախարարությունը նաև հավելում է.

Թափուկ վառելիքայտի մթերումն իրականացվում է «Հայաստառ» ՊՈԱԿ-ի «Անտառնտեսություն» մասնաճյուղերի կողմից:

Թափուկ վառելիքայտի տրամադրումն իրականացվում է ամբողջ տարվա ընթացքում՝ կախված թափուկի առկայությունից: Թափուկի դուրս բերումն «Անտառնտեսություն» մասնաճյուղերից իրականացվում է այն անձի կողմից, ում տրամադրվել է թափուկի օգտագործման տոմսը:

Նախարարությունը հորդորում է գերծ մնալ սպորտի ծառահատումներից և անօրինական ծագման վառելիքայտի ձեռքբերումից, գործել բացառապես օրենսդրական դաշտում: Մեր երկրում անտառը հանդիսանում է ազգային հարստություն, որի կառավարումը վերապահված է պետական կառավարման ինստիտուտներին: Բնակավայրերի ցանկը (Սյունիքի մարզ)

**«Սյունիքի անտառնտեսություն» մասնաճյուղ.** Վերինքեն, Ակներ, Քարահունջ, Խոտ, Շինուհայր, Հայիծոր, Տարթ, Սվարանց, Տանձատափ, Քաշունի, Բարձրավան, Շուշունի, Որոտան, Ներքին Խնձորենկ, Խոզկապար, Վաղատուր, Խնածախ, Արավուս,

**«Կապանի անտառնտեսություն» մասնաճյուղ.** Զորաստան, Առաջաձոր, Վանեթ, Գեղի, Հափնի, Սևաբար, Անտառաշատ, Տավոս, Ուխտավայր, Ներքին Խոտանան, Շրվենակ, Սյունիք, Լորաշենիկ, Եղգ, Ներքին Հանո, Ծավ, Շիլահող, Սրաշեն, Ճակատեն, Ուժանիս, Ագարակ, Եղվարդ, Կաղնուտ, Խորանց, Վարդավանք, Գեղանուշ, Քաջարան, Լեռնաձոր, Աճանան, Նոր Աստղաբերդ, Կապան (Բեխ, Վաչագան, Բաղաբույր, Շիարջիկ, Կավարտ թաղամասեր), Աղվանի, Տանձավեր, Վերին Խոտանան, Արծվանիկ և Դավիթբեկ բնակավայրեր, Կապան քաղաքի Բարաբաթում, Աշոտական, Արփիկ թաղամասեր, Երկաթուղայինների Նրբանցքների և Գրիգոր Արզումանյանի փողոցի սեփական տներ,

**«Միսիանի անտառնտեսություն» մասնաճյուղ.** Դարբաս, Արևիս, Լճեն, Շենաթաղ, Լոր, Շամբ, Գետաթաղ, Թասիկ, Շաղաթ, Որոտան, **«Չանգեզուր» կենսոլորտային համայնքի» պետական ոչ առևտրային կազմակերպություն.** Ավվանք, Կարճևան, Լեհվազ, Տաշտուն, Լիճք, Վարդանիծոր, Շվանիծոր, Վահրավար, Գուգենմիս, Կուրիս, Լոռնաձոր, Թխկուտ, Այգեծոր: //

# Մեկնարկել են Գորիս-Որոտան շրջանցող ճանապարհի վերակառուցման աշխատանքները

**Գ**որիս-Կապան ավտոմայրուղում 2021 թ. ամռանը տեղի ունեցած տագնապալից իրադարձությունները, որոնք որոշակիորեն շարունակվում են նաև այս օրերին, հավելյալ վկայություն են այն բանի, որ Գորիս համայնքի մեջ մտնող Որոտան, Շուշուկ, Բարձրավան գյուղերի հետ ճանապարհային հաղորդակցության այլընտրանքային ուղիների կառուցումը պահի հրամայականներից է:

Այլընտրանքային ուղիներից մեկը, անտարակույս, կարող է լինել Խոտ-Որոտան՝ դեռևս 1960-ական թվականներին կառուցված ճանապարհը, որը կարելի է վերագործարկել հիմնանորոգումից հետո:

Խազալ կապ կոչվող տարածքով ձգվող այդ ճանապարհի գործարկմամբ կբացառվի Շուշուկ, Որոտան և Բարձրավան գյուղերի հնարավոր շրջափակումը:

Եւ ահա սեպտեմբերի 27-ին մեկնարկել են այլընտրանքային ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

Հոկտեմբերի 12-ին ճանապարհաշինարարներին այցելեցին ՀԱԿ-ի ներկայացուցիչները՝ կուսակցության փոխնախագահ Լեւոն Չուրաբյանի գլխավորությամբ:

Ճանապարհաշինական տեղամասի պատասխանատու Գինեվան Դազարյանը հանգամանալից տեղեկություններ հաղորդեց կատարվող աշխատանքների ընթացքի մասին:

Խոտ-Որոտան 10 կմ երկարությամբ այլընտրանքային ճանապարհի վերակառուցումն իրականացնում է «Ճանապարհ» ՍՊ ընկերությունը:

Ենթադրվում է, որ հողային աշխատանքները կավարտվեն մինչև ընթացիկ տարվա վերջ:

Ճանապարհի հողային շերտը կունենա 12, ասֆալտբետոնե շերտը՝ 6 մ լայնություն:

«Ճանապարհ» ՍՊԸ-ն Բալասուկիից Գորիս է տեղափոխել ժամանակակից եւ հզոր տեխնիկա: Արդեն իսկ տեսանելի են կատարվող աշխատանքների մասշտաբները, որը, հիրավի, ոգեւորիչ է:

Եւ, այրուհանդերձ, ողջամիտ կլինեն, եթե իրականացվող աշխատանքներում ընդգրկեին հավելյալ ուժեր. դա են պահանջում տեղանքի ռեյինֆային բարդությունները, հողային աշխատանքների ենթադրվող ծավալը, այլապես դժվար կլինի մինչև տարեվերջ ավարտել աշխատանքների առաջին փուլը:



## Դավիթբեկ գյուղի մանկապարտեզը՝ նորոգված ու ավելի հարմարավետ

**Հ**ոկտեմբերի 9-ին սահմանամերձ Դավիթբեկ գյուղական բնակավայրում տեղի է ունեցել գյուղի մանկապարտեզի վերաբացման արարողությունը, որին ներկա է գտնվել նաև Կապան համայնքի ղեկավար Պարոյանը: Համայնքի ղեկավարը տնօրենի ուղեկցությամբ շրջել է մանկապարտեզի խմբասենյակներում, ծանոթացել շենքային, գույքային և ուսումնադաստիարակչական պայմաններին: Տնօրենի ներկայացմամբ՝ մանկապարտեզում կեցության, ուսումնառության ու ստեղծագործական ձիրքերի զարգացման համար ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմանները:

Անճանաչելիորեն փոխված նախադպրոցական այս կառույցը հոկտեմբերի 1-ից արդեն իսկ իր տանիքի ներքո է համախմբում 14 նախադպրոցականի և առավել զեղեցիկ ու հարմարավետ պայմաններում կազմակերպում

նրանց կրթությունն ու հանգիստը:

Մանկապարտեզն ամբողջովին կահավորվել է «Չարատ Կապան» ՓԲ ընկերության աջակցությամբ, իսկ անհրաժեշտ կենցաղային և գրասենյակային պարագաներով ապահովվել՝ համայնքի միջոցներով:

Մանկապարտեզի վերանորոգումն ու վերակառուցումն իրականություն է դարձել համայնք-պետություն համագործակցության արդյունքում:

Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ 23 719 560 ՀՀ դրամ:

ՀՀ կառավարության ներդրումը՝ 65% կամ 15 417 714 ՀՀ դրամ:

Կապան համայնքի ներդրումը՝ 35% կամ 8 301 846 ՀՀ դրամ:

Շինարարական կազմակերպությունը՝ «ՎԻԿՄՐՏ» ՍՊԸ:

09.10.2021



## Պարզեղ գտավ տիրոջը

**Ե**րեանի պետական համալսարանի ուսանող Լեւոն Քոչարյանը Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի հրամանագրով պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով: Լեւոնը բանակ է գորակուցվել 2019 թ. հունվարին, «Գրադ» կայանքի հրամանատար էր: Պատերազմը սկսվելուց մի բանի օր հետո՝ 2020 թ. հոկտեմբերի 1-ին, լրացել է նրա 20-ամյակը: Ահա այդպես նրա տարեկիցներին բաժին հասավ 5-րդ սերնդի պատերազմը, եւ նրանք պատվով տարան այդ ծանր խաչը: Հայրենիքի հանդեպ պարտքը կատարելուց հետո Լեւոնը շարունակում է ուսումը Երեանի պետական համալսարանի ինֆորմատիկայի եւ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսում: Պատեհ առիթը բաց չի թողնում լինելու Եռաբլուրում, որտեղ ամփոփված են նաև իր զինակից ընկերների աճյունները:



Հորեղբայրը գեներալ-մայոր Վալերի Քոչարյանն է, բանակի կորպուսի հրամանատար է եղել, ՀՀ պաշտպանության նախարարության բարձրաստիճան պաշտոնյա:

Ինքը հասակ է առել երաժիշտների ընտանիքում. հայրը Կապանի արվեստի պետական բուհի տնօրեն Վարդան Քոչարյանն է, մայրը՝ Հասմիկ Չավարյանը, Կապանի թիվ 2 երաժշտական դպրոցի դասատու:

Ի դեպ, բանի որ Լեւոնը ուսման մեջ էր, Սյունիքի զինկոմիսարիատի աշխատակից, մայրը Սեւակ Մանուկյանը պարզեղ հանձնել է հորը՝ արվեստի պետական բուհում կրթօջախի մանկավարժների եւ սովորողների մասնակցությամբ հանդիպման ժամանակ: Ասել է թե՛ վերջիններիս համար արարողությունը վերածվել է ռազմահայրենասիրական դասի. եւս մի անգամ ներկաները արժեւորել են մերօրյա պատերազմի մասնակիցների նվիրվածությունը հայրենիքին եւ հարգանքի սուրբ մատուցել ընկածների հիշատակին:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

**Սյունյաց երկիր**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:

ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:

(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru  
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհանդիսանալ: Կյուբերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

տպագրվող կյուբերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հոլմը «Սյունյաց երկիր» պարտադիր է: Նշանի տակ տպագրվում են գովազդային կյուբեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 19.10.2021թ.: